# Ազգ Azg

26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 195 (4575)

ISSN: 1829-1651


## Յուրաքանչյուր ադրբեջանցի մի ձայնատղնակ ունի

### *Ադրբեջանն, ըստ ՄԱԿ-ի զեկույցի, Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրի խախտող*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ-ադրբեջանական հակադիր տեսակետներն ու դրանցում ուրիշներին համոզելու մոտեցումները հաճախ բախումների առիթ են դառնում տարբեր մակարդակի ատյաններում, այդ թվում՝ միջազգային: Ավելի հաճախ ադրբեջանական կողմն անգիր արած ու տարիների ընթացքում սուտը կրկնելուց թերեւս իրենց իսկ ականջներին արժանահավատ հնչող հայտարարություններով հանդես է գալիս տարբեր վայրերում՝ բնավ էլ չտեղավորվելով քննարկումների համատեքստում: Այդպիսի օրինակների պակաս չի զգացվում մեր տարածաշրջանի մակարդակով անցկացվող տարբեր միջոցառումների ժամանակ, երբ հանդիպում են հայը, ադրբեջանցին ու վրացին:

Այդպիսի մի հարթակ էլ արդեն տարիներ շարունակ ադրբեջանական անպատեհ ու կեղծ հայտարարությունների համար դարձել է Միավորված ազգերի կազմակերպությունը: Հերթական անգամ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին կոմիտեի «Տարածաշրջանային զինաթափումն ու անվտանգությունը» խորագրով քննարկումների ժամանակ հոկտեմբերի 21-ին եւ 22-ին Նյու Յորքում ելույթներ են ունեցել նաեւ Հայաստանն եւ Ադրբեջանը:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ այս քննարկումներում էլ Ադրբեջանը համատեքստից դուրս է հայտնվել, երբ այդ երկրի ներկայացուցիչն ընթերցել է հերթական հայտարարությունը «հայկական ագրեսիայի», «փախստականների միլիոնանոց թվաքանակի» եւ նման անհեթեթությունների մասին: Իր ելույթում Հայաստանի ներկայացուցիչն, անդրադառնալով Հարավային Կովկասի անվտանգության հարցերին, կարեւորել է զինաթափման բնագավառում միջազգային հանձնառությունների անվերապահ ու լիակատար իրականացումն ու ընդգծել առկա սպառազինությունների վազքի վտանգը միջազգային ու տարածաշրջանի անվտանգության տեսանկյունից:

Ելույթներին հաջորդած քննարկման ընթացքում Հայաստանի պատվիրակությունն անդրադարձել է նաեւ միջազգային հանրությանը մոլորեցնելու Ադրբեջանի փորձերին՝ ներկաների ուշադրությունը հրավիրելով այդ երկրի ռազմական բյուջեի աննախադեպ աճի եւ 2000 թվականից սպառազինության թափանցիկության ապահովմանն ուղղված ՄԱԿ-ի տարեկան զեկույցներին համապատասխան տեղեկատվություն չտրամադրելու փաստերին:

*Տես էջ 3*

## Վերջապե՜ս. Նոր գրախանութ Երեւանում

### *«Բյուրոկրատ» գրախանութի բացումը*

**Երեկվա երեկոն՝ երեւանյան, եզակի էր: Մայրաքաղաքի Սարյան-Պուշկին փողոցների խաչմերուկում (Պուշկինի 51-26) «Բյուրոկրատ» կոչվող գրախանութի բացումը մեր ներկայիս իրականության, ցավոք, դեպի իր մայրամուտը թեքվող մտավորական կյանքի համար, իսկապես իրադարձություն էր: Մենք անչափ կարեւորում ենք այս իրողությունը, որովհետեւ տիրող սնանկ մտայնությունների ու մթնոլորտի մեջ հոգեւոր-մշակութային երակը օրավուր ցամաքում է. այսօրվա տիրապետող մասսայական մշակույթի ագրեսիան սպառնում է մտավորական կյանքին՝ ընդհուպ ոչնչացման. օղակը գնալով սեղմվում է՝ շնչահեղձ լինելու չափ: Երբ երկու տասնամյակի ընթացքում 2-3 մշակութային նոր օջախներ են ընդամենը բացվում՝ ճոխ ռեստորանների ու շքեղ ցուցափեղկերով բյուր խանութների կողքին՝ խեղճացած եւ կամ եղած 2-3 գրախանութներից դեռ փակվում են նաեւ, այսպիսի պայմաններում, իհարկե, արդիական չափանիշներով, բարձր ինտելեկտուալ գրականությամբ հագեցած եւ ամենակարեւորը՝ գրքերի ճաշակով եւ խիստ ընտրությամբ նման գրախանութի գոյությունը, անհրաժեշտություն է եւ գուցե նաեւ ինչ-որ տեղ խորհրդանշական՝ մեր միջավայրում մտավորական կյանքի մի նոր վերարթնացումի:**

**Գրախանութի պաշտոնական բացումը տեղի ունեցավ երեկ՝ Կոստան Զարյանի «Անցորդը եւ իր ճամբան» գրքի շնորհանդեսով՝ գրքի հրատարակիչներ՝ («Սարգիս Խաչենց եւ Փրինթինֆո») Սերգեյ Խաչիկօղլյանի, Արամ Մեհրաբյանի եւ գրքի կազմող խմբագիր՝ Երվանդ Տեր-Խաչատրյանի ելույթներով: Ավելի հանգամանալի անդրադարձը՝ «Ազգի» հաջորդ համարում:** **Մ. Բ.**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

## Ապակու հետեւից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Ինչպես որ մեր երկրում ժողովրդավարությունն է «զարգանում», այսինքն՝ ամեն բան կա ժողովրդավարության համար՝ օրենքներ, համաձայնագրեր, կառույցներ, բայց ինքը՝ ժողովրդավարությունն այդպես էլ չկա, ահա այդպես էլ կարելի է դիտարկել Հայաստանի խորհրդարանի նոր, օվալաձեւ դահլիճի ու խորհրդարանի լուսաբանումն ապահովող լրագրողական հնարավորությունների խնդիրը. դե, լրագրողներիս համար սիրուն աթոռներ կան սիրուն օթյակներում, կից սենյակներ՝ մոնիտորներով, բազմոցներ. դրսի համար ցուցադրական կողմն ապահովված է, սակայն փաստն այն է, որ լրագրողները պետք է նստեն փակ եւ նեղ օթյակում, որտեղ նստած դիրքից երեւում է խորհրդարանի օվալաձեւ դահլիճի ղեկավարման վահանակն ու դահլիճի կեսը միայն, ողջ դահլիճը տեսնելու համար պիտի ոտքի վրա ապակու հետեւում տնկված կանգնեն, իսկ ձայնագրելու համար էլ պետք է անընդհատ անցնեն մյուս նստածներին խանգարելով դեպի միակ դինամիկը: Իսկ գլխավորը, ինչի շնորհիվ ի վերջո հետաքրքրություն է ստանում լրագրողի աշխատանքը խորհրդարանում եւ նրա ներկայացրած լրատվամիջոցում, հրատապ հարցին զուգահեռ դահլիճ ելումուտ անող հարկավոր պատգամավորներից կարծիքներ վերցնելն է, ինչը հիմա գործնականում հնարավոր չէ գոնե տվյալ՝ հարկավոր պահին, քանի որ պետք է երրորդ հարկից վայրկյանում չգիտեմ քանի մետր արագությամբ սլանալ երկրորդ հարկ, դեռ հստակ էլ պետք է իմանալ՝ ո՞ր դռնից է դուրս գալու պատգամավորը, որ հասցնի դիմացը կտրել ու իր հարցը տալ: Ահա ստացվեց ճիշտ մեր երկրի ժողովրդավարության նման՝ անունը կա, ամանում՝ ոչ: Մի խոսքով՝ ապակին նեղում է, ձայնագրելու հնարավորություն չկա, ինտերվյու վերցնելը տասնապատիկ դժվարացել է, ինտերվյուները վերցնելու համար մի քանի անգամ պիտի լույսի արագությամբ վերուվար անես ԱԺ երկրորդ եւ երրորդ հարկերի միջեւ 100 մետր երկարությամբ միջանցքներով ու ծակուծուկերով: Այսքան նվաստացած վերջին քսան տարվա ընթացքում լրագրողը դեռեւս չի եղել հայոց խորհրդարանում: Դե արի ու մի մտածիր, թե այս բոլորն արված է հատուկ՝ մեր ազգընտիրներին որքան հնարավոր է լրագրողների հետ շփումներից հեռու պահելու համար:**



ՖՈՏՈԼՈՒՐ

*Տես էջ 2*

## «Երբ լուսաբանվի ծպտյալ հայերի հարցը, ակնհայտ կդառնա, թե որքան անտեղի են ցեղասպանության հայկական պնդումները»

### *Հայտարարել է Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, պրոֆ. Հալաչօղլուն*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուի հոդվածը, որը ստորեւ ներկայացնում ենք, Կ. Պոլսո Հայոց պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանի քրոջ թոռների քրիստոնեական ակունքներին վերադարձի առնչությամբ «Հյուրիեթի» սեպտեմբերի 21-ի համարի հրապարակման արձագանքն է: Հոդվածը սեպտեմբերի 23-ին հրապարակվել է «Թուրքական օջախների» պաշտոնական կայքէջում: Առաջին հայացքից թեեւ ժամանակավրեպ է թվում, սակայն Հալաչօղլուն հոդվածում վերստին անդրադառնում է ծպտյալ հայերին, պահանջում է ինքնության ինքնակամ բացահայտում, պայմանավորելով երկրում քրդական ահաբեկչության անջատողականության հարցերի, ինչպես նաեւ ալավիների հիմնախնդրի լուծումը այս հայերի բացահայտմամբ:

Ավելին, նա կարծիք է հայտնում, որ ծպտյալ հայերի բացահայտման դեպքում ակնհայտ կդառնա, որ խնդիրը ոչ թե բնաջնջումն է, այլ դավանափոխությունը, այսպիսով հօդս կցնդի հայերի ցեղասպանության թեզը: Այսինքն, ծպտյալ հայերի բացահայտման նրա շահագրգռությունների նպատակը թուրքական ժխտողականության հիմնավորումն է եւ երկրի մասնատման վտանգի չեզոքացումը, քանի որ նա այդ հայերին համարում է ազգային անվտանգության սպառնալիք Թուրքիային:

*Տես էջ 2*

## Երեւանում հայտնաբերվել են ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության երկու զինծառայողների դիակներ

Շաբաթ օրը՝ հոկտեմբերի 23-ին, հայտնաբերվել են Հայաստանում Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության սահմանային կառավարման երկու զինծառայողների դիակները: Ինչպես հայտնում են Հայաստանում Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության սահմանային կառավարման մամուլի ծառայությունից, «հոկտեմբերի 23-ին Երեւան քաղաքի սահմանային կառավարման կետերից մեկում երկու զինծառայողների դիակներ են հայտնաբերվել: «Հայտնի մանրամասները չեն տարածվում հետաքննության շահերից ելնելով»: Հայտնաբերվել են Ռուսաստանի քաղաքացիներ, 27-ամյա Արմեն Զախարյանի եւ 39-ամյա Արթուր Ենոքյանի դիակները: Նրանցից մեկը մահացել է դանակի հարվածներից, մյուսը՝ հրազենային կրակոցից: Ավելի վաղ հայտնվել էր, որ երկու զինծառայողների սպանությունը կատարվել է Գյումրիում տեղակայված ռուսական ռազմաբազայում:

Հ. Ա.

## Թաթայի «Մերսեդեսը» վթարի է ենթարկվել

Հոկտեմբերի 25-ին, ժամը 15.30-ի սահմաններում Երեւանի Իսակովի պողոտայում միմյանց են բախվել 5 ավտոմեքենաներ, որոնցից մեկը եղել է հայտնի երգիչ Թաթա Սիմոնյանի «Մերսեդես» մակնիշի մեքենան: Ղեկին եղել է հենց Թաթան, բարեբախտաբար, տուժածներ ու վիրավորներ չկան: Դեպքի վայրում են եղել նաեւ Թաթայի պրոդյուսեր Գրիգոր Նազարյանը եւ ռաբիս երգիչ Սպիտակցի Հայկոն:

Մ. Մ.

## Վան, Դիարբեքիր, Անի...

**Թուրքական պետությունում երկրորդ հայկական եկեղեցում է հնչել աղոթք: Վանի Սուրբ Խաչ եկեղեցու բացումից, գմբեթին վերջիվերջո խաչի տեղադրումից հետո Դիարբեքիրում նույնպես վերաբացվեց Սուրբ Կիրակոս եկեղեցին, որը, Պոլսո պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի խոսքերով, «Միջին Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցին է եւ ունի 1400 քմ աղոթատեղի»: Աթեշյանը, որը մասնակցել է եկեղեցու վերաբացումից հետո առաջին աղոթքին, նաեւ հույս է հայտնել, որ հաջորդ տարի Սուրբ Կիրակոսում մեծ պատարագ կմատուցվի:**

**Վերջին անգամ Դիարբեքիրի եկեղեցին գործել է 1978-ին: Երկար տարիներ օգտագործվել է որպես պահեստ: Այս տարիներին եկեղեցին անբարեկարգ, խարխուլ վիճակում էր: Սուրբ Կիրակոսը վերականգնվել է հատուկ եկեղեցու վերականգնման համար ստեղծված հիմնադրամի եւ Դիարբեքիրի քաղաքապետարանի ընդհանուր ջանքերով: 2,5 մլն դոլար արժողությամբ ծախսերի 70 տոկոսը հոգացել է հիմնադրամը, մնացած 30 տոկոսը՝ քաղաքապետարանը: Վերակառուցման աշխատանքները տեւել են երկու տարի:**

**«30 տարի անց հայկական եկեղեցում հնչած առաջին աղոթքին մասնակցելու համար Սուրբ Կիրակոս էին ժամանել Արամ արք. Աթեշյանը, Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը, եկեղեցու հիմնադրամի նախագահ Թեքին Փափուչյանը եւ այլք», այս մասին գրում է թուրքական «Հյուրիեթը»՝ մեջբերելով արքեպիսկոպոսի եւ քաղաքապետի խոսքերը: «Աղթամարի Սուրբ Խաչի պես այս եկեղեցին նույնպես հայերիս համար կարեւոր է: Մենք ուրախ ենք, որ այն մեր եկեղեցին է եւ մեր ձեռքից չեն վերցրել», նշել է Աթեշյանը: Իսկ Դիարբեքիրի քաղաքապետը իր խոսքում նշել է. «Մեր մարգարեները տարբեր էլ լինեն, միեւնույնն է, դուք իմ եղբայրներն եք: Խնդրում եմ ընդունեք իմ եղբայրությունը: Ես պարզ ու անկեղծ կասեմ՝ ձեր առաջ պարտական եմ զգում ինձ. ես պարտք եմ ձեզ: Այս քաղաքը որքան որ իմն է, այնքան էլ ձերն է»: Բայդեմիրը նաեւ ընդգծել է, որ Սուրբ Կիրակոսի բացումը կիրականացվի «հայ եղբայրների հետ, եւ այդ հանդիպումները շարունակական կլինեն»: Իր հերթին «Սուրբ Կիրակոս» հիմնադրամի նախագահ Փափուչյանը նշել է. «13 տարեկան էի, երբ այստեղ եկանք: Փողոցում հաճախ էի լսում իմ հասցեին հնչող «գյավուր» բառը: Ծնողներս այստեղ շատ անհանգիստ էին ապրում, եւ մենք ընտանիքով հեռացանք: Ուզում եմ իմ թոռնիկին այստեղ կնքել. մենք չենք կարող թույլ տալ, որ ոչնչացվեն մեր արմատները»:**

**Մեր արմատների ոչնչացման մասին, սակայն, ահազանգել է Համաշխարհային ժառանգության հիմնադրամը (Global Heritage Fund): Կազմակերպությունը հրապարակել է «Ոչնչացման եզրին հայտնված պատմական հուշարձանների մասին» իր զեկույցը, որոնց թվում են Անիի պատմական հուշարձանները: Զեկույցում հատկապես մտահոգություն է հայտնվել «1001-ին կառուցված Անիի մայր տաճարի թուրքական կառավարության կողմից ոչնչացման» կապակցությամբ: Առհասարակ Թուրքիայի վարկանիշը՝ «պատմամշակութային ժառանգության հանդեպ դրսեւորած անտարբերության» առումով, գնահատվել է ճգնաժամային:**

Հ. ԱՓՅԱՆ

# Այս նվիրատվությունը եւ կուղղվի առողջապահական ծրագրերին

«Ղարաբաղ Տելեկոմը» հերթական նվիրատվությունն է արել: Շաբաթ օրը կառավարության նիստերի դահլիճում վարչապետ **Արա Հարությունյանը** եւ ընկերության գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** ստորագրել են 480 միլիոն դրամի նվիրատվության պայմանագիր: Նախորդ տարիներին «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի տրամադրված գումարներով վերանորոգվել եւ արդիականացվել են Ստեփանակերտի հակահամաճարակային կայանը, Հադրութի եւ Մարտակերտի շրջանային հիվանդանոցները, այլ բուժհիմնարկներ: Այս անգամ, վարչապետի խոսքով, տրամադրված միջոցները կուղղվեն Բերձորում նոր հիվանդանոցի կառուցմանը, որի կարիքը խիստ է զգացվում:

Ռալֆ Յիրիկյանը ներկայացրել է ընկերության առաջիկա ծրագրերը: Մասնավորապես խոսք է գնացել ինտերնետ ծառայությունն էժան ու որակով մատուցելու հնարավորության մասին, ինչն իրականություն կդառնա արդեն առաջիկա ամիսներին:

Հասկանալի է, որ, ինչպես նշեց պայմանագրի ստորագրման արարողությանը մասնակցող՝ ԼՂՀ հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ **Հակոբ Ղահրամանյանը**, ոլորտում բացարձակ առաջատար համարվող «Ղարաբաղ Տելեկոմի» հետ համաձայնություն է ձեռք բերվել նաեւ ուրիշ ինտերնետ-պրովայդերների զուգահեռ գործունեության մասին, որով կապահովվի ազատ տնտեսական մրցակցությունը: Միեւնույն ժամանակ, համատեղ քննարկվում է բջջային կապի սակագները մեղմելու հարցը, եւ նոյեմբեր ամսին կհայտարարվի, թե հետայդու բաժանորդներն ինչ գներով են վճարելու բջջային ծառայությունների համար:

Ինչպես տեղեկացրեց վարչապետ Արա Հարությունյանը, բարեգործների հետ բանակցություններ են ընթանում արցախցի դպրոցականներին համակարգիչներով ապահովելու վերաբերյալ: Խոսքը մի քանի տասնյակ համակարգիչներ ձեռք բերելու մասին է, եւ այս ծրագրի իրագործմամբ նաեւ ինտերնետը հասանելի կդառնա հանրակրթարաններում: Իսկ մինչ այդ, Արցախի մի շարք դպրոցներում անվճար ինտերնետ ծառայություն է մատուցում «Ղարաբաղ Տելեկոմը»:

Արա Հարությունյանը, շնորհակալություն հայտնելով հերթական բարեգործական ակցիայի առթիվ, բարձր գնահատեց ԼՂՀ-ում կապի ծառայությունների արդիականացման, տնտեսության զարգացմանը նպաստելու գործում «Ղարաբաղ Տելեկոմի» գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի անձնական ներդրումը: Այս համատեքստում լրագրողներից մեկը նույնիսկ հարց ուղղեց Ռ. Յիրիկյանին, թե չէ՞ր ուզենա արդյոք իր դրական հատկանիշները ծառայեցնել պետական հատվածում, մասնավորապես ԼՂՀ որեւէ նախարարություն ղեկավարելով: Վերջինս պատասխանեց, որ նման խնդիր չի դրել եւ ունի անելիքներ այն բնագավառում, որում ինքն աշխատում է:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Ապակու հետեւից

*1-ին էջից*

«Մենք միշտ հասանելի ենք, վազել պետք չէ: Իսկ դահլիճի այս ձեւն ամբողջ աշխարհում ընդունված ձեւ է, բոլոր եվրոպական երկրների պառլամենտներում մոտավորապես նույն կառուցվածքն ունի պառլամենտը, դուք ունեք բոլոր հնարավորությունները», ի պատասխան մեր դժգոհության՝ ասաց ԱԺ փոխնախագահ **Սամվել Նիկոյանը**: ԲՀԿ-ական **Արամ Սաֆարյանը** եւս այս բոլորի մեջ արտառոց ոչինչ չտեսավ՝ անցած տարի Հայաստանի խորհրդարանական 15-հոգանոց պատվիրակությանը հրավիրվել էր ՌԴ Պետդումա, ճիշտ նույն կարգավիճակում էին հայ պատգամավորները, ապակու հետեւից հետեւել են Պետդումայի աշխատանքին: Իսկ նստած տեղից դահլիճի կեսը չտեսնելու մասին էլ ասաց. «Դժվարանում եմ ասել՝ գուցե պրոյեկտի անհարմարություն կա, մենք որ Պետական դումայում էինք՝ նստեցինք, շատ լավ երեւում էր»:



Լրագրողների դժգոհությունները հասան այն կետին, որ ԱԺ լրատվական ծառայության ղեկավար Գոհար Պողոսյանը լրագրողներիս հանդիպեցրեց ԱԺ աշխատակազմի ղեկավար **Գեղամ Ղարիբջանյանի** հետ, որն ինքը եւս խնդիրներ տեսնում էր: Առաջին խնդիրն, ըստ նրա, այն է, որ մարդիկ մի բանի են սովոր, հետո գալիս է մի նոր փուլ, որին կամ պետք է սովորել, կամ նորից փոփոխություններ պետք է արվեն: Մի խնդիր էլ իր կողմից մեզ՝ լրագրողներիս առաջադրեց. «Եկեք սկսենք դրես - կոդից. Դրես - կոդ ասելով՝ նկատի ունեմ, որ Ազգային ժողովի աշխատակազմից սկսած՝ ցանկացած ելումուտ ունեցող պետք է այնպես հագնվի, որ վերեւից կամ ներքեւից իրար նայելիս որեւէ արտառոց բան իրար մասին չխոսենք»: Դե եթե պատգամավորների պես ենք հագնվելու՝ մի-մի մանդատ էլ տվեք՝ պրծնենք: Գ. Ղարիբջանյանը լրագրողների մատնանշած անհարմարությունները կապեց ԱԺ շենքի ճարտարապետության հետ. «Հիմա այդ ձեւի է նախագծված, ես չեմ նախագծել, ոչ էլ Աբրահամյանը. եթե այդ նախագիծը խնդիրներ է առաջացնում, խնդրեմ, ես զեկուցեմ պարոն Աբրահամյանին, որ ապակին մարդկանց մոտ կլաուստրոֆոբիա է առաջացնում»:

Խնդիրները լրագրողները ներկայացրին՝ ձայնագրելու անհարմարություններ, ԱԺ մուտքուելքի սահմանափակումներ, լրագրողայական օթյակները ԱԺ- դահլիճից մեկուսացնող ապակի ու փակ, անօդ օթյակներ. «Ապակին հանենք՝ ճաղեր դնենք, որ չընկնեք: Ճարտարապետի արածն է», խոսացավ-կատակեց Ղարիբջանյանը: Աթոռների տակ դինամիկներ եւս խոսացվեցին, դահլիճին մեծ եւս մեկ մոնիտոր է միացվելու, որ ցանկացողների դահլիճի դռանը մոտիկ տարածքից հետեւեն նիստի ընթացքին՝ հարկավոր պահին իրենց հարկավոր պատգամավորին «բռնելով», համակարգիչներ կբերվեն օթյակներին մեծ սենյակներ: Սակայն գլխավոր անհարմարությունը՝ երրորդ հարկ-երկրորդ հարկ երթուդարձը լաբիրինթոս միջանցքներով, ոչ հնարավոր է վերացնել, ոչ էլ փոփոխել՝ «Հո դահլիճը նորից չենք քանդելու, տեղն այդքան է»:

Ի դեպ, միայն լրագրողներիս համար չէր անհարմար, առավոտյան նիստն սկսելու պահին պատգամավորները եւս քվեարկելիս դժվարություններ ունեցան, անգամ ԱԺ նախագահը պատգամավորներից մեկի դժգոհությանն ի պատասխան նկատեց, թե՝ «Կես ժամ շուտ գայիք, մարզվեիք», հետո էլ հանգստացրեց. «Առաջին օրն է, կսովորեք»՝ բացատրելով, որ նախ պետք է կոճ քվեարկեն, հետո էլ կրկին հաստատեն քվեարկությունը, իսկ Ս. Նիկոյանը ստիպված էր բացատրել, որ երբ գրվում է «Շնորհակալություն քվեարկության համար», ուրեմն արդեն քվեարկել են:

Չնայած լրագրողների մոլորված վիճակին, որոնք չէին կարողանում կողմնորոշվել՝ աշխատե՞ն, թե՞ ոչ, ԱԺ-ն շարունակեց իր սովորական աշխատանքը, անգամ հետաքրքրություն ներկայացնող հարցեր էին քննարկվում, ինչպես օրինակ՝ օրենքի այն նախագիծը, որով առաջարկվում է յուրաքանչյուր տարի դատավորների եւ դատախազի աշխատավարձի չափեր սահմանել պետբյուջեի օրենքով, նաեւ բարձրացնելով նրանց աշխատավարձը: Կառավարության այս նախաձեռնությանը կտրուկ դեմ էին ՀՅԴ-ն ու «Ժառանգությունը»՝ այդ նախաձեռնության մեջ դատավորների եւ դատախազի անկախությանը վտանգի սպառնալիք ու կոռուպցիայի հնարավորություններ տեսնելով, թեեւ այս նախագծի հիմնավորումներից էր հակակոռուպցիոն շարժառիթը: Բացի այդ՝ բյուջեում արդեն այդ աշխատավարձերը նախատեսված էին, ինչը ե՛ւ **Լարիսա Ալավերդյանը**, ե՛ւ **Արծվիկ Մինասյանը** մտահոգիչ անվանեցին՝ ԱԺ-ն որպես կառավարությունից կախված մարմին դիտարկելը նկատի ունենալով: Իսկ «Ժառանգության» առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանն** առավոտյան հասցրեց հետաքրքրվել, թե այս նոր, գեղեցիկ դահլիճում ե՞րբ է քվեարկության դրվելու ԼՂՀ ճանաչման վերաբերյալ «Ժառանգության» ներկայացրած եւ առաջին ընթերցմամբ քննարկված նախագիծը: իսկ ԱԺ նախագահն էլ նրան պատասխանել էր, թե այս քառօրյայում այդ քվեարկությունն ընդգրկված է՝ կոալիցիան եւ ընդդիմությունը մի անգամ էլ պետք է խոսեն-պայմանավորվեն դեռ: Մինչդեռ ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանն** առաջարկում է ընդհանրապես օրինագիծը հանել օրակարգից եւ միայն ԱԺ ուղերձում թողնել:

Էլի լրագրողների մոլորվածությունը մի կողմ՝ անխոնջ Արմինե Անտիկյանը (ԱԺ նախագահին առընթեր մշակույթի հարցերի պատասխանատու) նոր դահլիճին կից նոր ֆոյեում մի թարմ ցուցահանդես էր կազմակերպել՝ գեղանկարիչ Էդվարդ Սաունի աշխատանքների ցուցահանդեսը՝ գունեղ դարձնելու համար պատգամավորների նորդահլիճային առաջին օրը:

ԹՈՒՐՔԱՊԱՏՈՒՄ

# «Երբ լուսաբանվի ծպտյալ հայերի հարցը, ակնհայտ կդառնա, թե որքան անտեղի են ցեղասպանության հայկական պնդումները»

*1-ին էջից*

Սակայն ինչպիսի նկրտումներ էլ ունենա Հալաչօղլուն կամ ինչ առաջադրանք էլ կատարի, այնուամենայնիվ պատճառ է դառնում, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության հետ արծարծվի նաեւ ծպտյալ հայերի հարցը: Դա կհանգեցնի՞ այս լուրջ հարցի պատշաճ մակարդակով ուսումնասիրությանը, թե՞ ոչ՝ չգիտենք: Բայց որ ուսումնասիրության նախապայմանը հարցի վերարծարծումներն են, ակնհայտ է: Ահա թե ինչ է գրել Հալաչօղլուն.

**«Սեպտեմբերի 21-ի համարում «Հյուրիեթ» թերթը «Արդեն անձնագրում նշում են, որ քրիստոնյա են» վերնագրով հրապարակեց Վանից ուղարկված մի թղթակցություն, որի առարկան իրականում Վանա լճի Աղթամար կղզու եկեղեցու ժամերգությունն էր: Թղթակցության մեջ նշվում էր, որ Թուրքիայում շնորհիվ Աղթամարի եկեղեցական արարողության եւ երկրի ժողովրդավարացման, այն հայերը, որոնք ստիպված քողարկում էին իրենց ինքնությունը, ազգային ակունքներին վերադառնալու հնարավորություն ստացան: Մի՞թե դա այդպես է: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ թղթակցության մեջ հիշատակվում էին Թուրքիայի հայերի պատրիարքի տեղապահ, գերաշնորհ Արամ Աթեշյանի քրիստոնեական ակունքներին վերադարձած զարմիկների անունները, որոնց միջավայրում ճանաչել են իբրեւ քուրդ մահմեդականների: 2007-ին Կեսարիայում մասնակցելով մի գիտաժողովի, ասել էի, որ ծպտյալ բազմաթիվ հայեր ներկայանում են իբրեւ քուրդ կամ ալեւի: Ասածներս այնպիսի թոհուբոհի են առաջացրել, ներառյալ ռասիզմը, ինչով ասես ինձ չվիրավորեցին՝ ենթարկելով Լինչի դատաստանի: Մինչդեռ ե՛ւ Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեզի պաշտպանողները, ե՛ւ հայկական սփյուռքը մշտապես հարց են բարձրացնում, թե ո՞ւր են կորել հայերը: Ես այդ խոսքերով ոչ քուրդ, ոչ էլ ալեւի քաղաքացիներին էի վիրավորում, այլ՝ վավերագրերով ապացուցում էի, թե որտեղ են հայերը: Ասածներս ամբողջությամբ հենվում էին ամերիկյան արխիվային փաստաթղթերի վրա, որոնցում անուն առ անուն, գյուղ առ գյուղ արձանագրված են բոլոր տվյալները: Արխիվային այդ փաստաթուղթը «Քրդացած հայեր» վերնագրով զեկուցագիրն է, որը պատրաստել են հայկական ծագումով պաշտոնյաները: Զեկուցագրում նշվում է, թե հայկական որ համայնքը քրդական որ աշիրաթի անունն է յուրացրել, բնակության վայրերով հանդերձ, ըստ որում՝ գյուղ առ գյուղ: Ինձ երբեք չհարցրեցին, թե որտեղից եմ քաղել այդ տվյալները, պարզապես մեղադրեցին ռասիզմի մեջ: Հարց է ծագում. այսօր ի՞նչ է պատահել, որ բոլորը, առանց այլեւայլի, կարողանում են խոսել մահմեդականի անվան տակ քողարկված հազարավոր հայերի մասին: Նրանց հանդեպ «միջավայրի ճնշումը» հերյուրանք է, որովհետեւ այդ միջավայրի բնակիչները բոլորին գիտեին, հիրավի գերաշնորհ պատրիարքի գլխավորությամբ, բոլորին էր հայտնի, թե ովքեր ծպտյալ հայ են եւ որ գյուղերում են բնակվում: Նույնիսկ երջանկահիշատակ Հրանտ Դինքն էր ասել, որ սկսած 1977-ից միսիոներները բուռն ջանքեր են գործադրում հայտնաբերելու համար ծպտյալ հայերին: Իմ պատկերացմամբ, ծպտյալ հայերի թիվն այսօր առնվազն 500 հազար է Թուրքիայում:**

**Հայ լինելը հանցանք չէ, ոչ էլ նսեմացուցիչ հանգամանք: Թուրքիայում ունենք հայկական ծագումով քաղաքացիներ, որոնց հետ՝ նաեւ սերտ հարաբերություններ: Իմ կարծիքով՝ հայկական ծագումով մեր քաղաքացիների բուն խնդիրը ծպտյալ հայերն են, ինչպես նաեւ ցեղասպանության դատարկաբանությունը մեջտեղ բերողները: Պատմությունը ականատես է եղել բազում տհաճ իրադարձությունների, որոնցից սակայն ոչ մեկը այսպիսի փտախտի չի հանգել, այն էլ՝ այսքան երկար ժամանակ: Պետք է ճշգրտել, թե ովքեր են հարցը (ծպտյալ հայերի) անձնավորել: Եթե հիշում եք, ես խնդիրը (քուրդ եւ ալեւի ինքնությամբ ներկայացող հայերի) չէի անձնավորել՝ մտածելով, որ եթե իրենք իրենց բացահայտեն, ավելի ճիշտ կլինի: Հիմա էլ նույն կարծիքին եմ: Սակայն Թուրքիայում տեղի ունեցած մի շարք իրադարձությունների պարզաբանումը ենթադրում է նրանց բացահայտման անհրաժեշտությունը: Ցավոք, վերջին շրջանում Թուրքիան դարձավ էթնիկականության դրախտ: Բուն ռասիզմը հենց երկրում մարդկանց զանազանման համար նախադրյալներ ստեղծելն է: Իրավիճակը երկրում ընթանում է մոտ ապագայում Թուրքիայի տարբաժանման հունով: Իսկ դա ենթադրում է հայերին քողարկված ձեւով գույքի տրամադրումն ու փոխհատուցման համար նախադրյալների ստեղծումը:**

**Երբ հարցը (ծպտյալ հայերի) կատարելապես լուսաբանվի, ակնհայտ կդառնա, թե որքան անտեղի են ցեղասպանության հայկական պնդումները: Ավելին, Թուրքիան ահաբեկչության եւ քրդական անջատողականության հարցերում լուրջ տեղաշարժեր կարձանագրի, հարցի լուսաբանման դեպքում կբացահայտվեն նաեւ այն դավերը, որոնք դյութում են զուտ թուրքական ծագում ունեցող մեր ալեւի քաղաքացիների դեմ: Խնդիրն այն է, թե մենք որքա՞ն ենք պատրաստ առանց վախենալու առերեսվել հարցի հետ կամ ուզո՞ւմ ենք իմանալ ճշմարտությունը, թե՞ ոչ: Ինչպես Աղթամար կղզու եկեղեցու խաչի պարագայում, որը, ըստ գերմանական աղբյուրների, 1907-ին Հայաստանից եկած Միշելյան ավազակախմբի պարագլուխը, եկեղեցին կողոպտելուց հետո տեղից հանել եւ որպես նվեր տարել է իր տիկնոջը: Թե չէ քաջ գիտենք մեր շրջապատում առկա հազարավոր հայերի գոյության մասին»:**

# ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է նույն վարչության անդամ Սուսաննա Ղազարյանին սիրելի եղբոր՝

**Մարգպետ Ղազարյանի**

վաղաժամ մահվան կապակցությամբ:

Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, հոկտեմբերի 26-ին, ժամը 19.00-21.00, Արարատի մարզի Մարմարաշեն գյուղ, 2-րդ փողոց, տուն 1 հասցեում:

Հուղարկավորությունն ու թաղումը՝ վաղը, հոկտեմբերի 27-ին, ժամը 14.00-ին, նույն հասցեից:

«Ազգի» խմբագրությունը միանում է ցավակցություններին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ֆրանկոֆոնները կոչ են անում ձեռնպահ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից

«Մենք վերահաստատում ենք մեր անվերապահ աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ»: Մենք կոչ ենք անում հակամարտության բոլոր կողմերին ձեռնպահ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, ինչը կվտանգի խաղաղ գործընթացի ապագան: Մենք կոչ ենք անում կողմերին՝ շարունակել բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների առաջարկած սկզբունքների ամբողջության հիման վրա՝ որպես այս հակամարտության հավասարակշռված եւ երկարատեւ կարգավորման հիմք», հոկտեմբերի 23-24-ը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովին ընդունված բանաձեւում առաջին անգամ ընդգրկվել է արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ այս դրույթը:

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը եւս մասնակցում էր Ֆրանկոֆոնիայի 13-րդ գագաթաժողովին, որ տեղի ունեցավ շվեյցարական Մոնտրո քաղաքում՝ կազմակերպության 40-ամյակի շրջանակներում: Գագաթաժողովին մասնակցելու համար Մոնտրո էին ժամանել կազմակերպության 70 անդամ, ասոցիացված եւ դիտորդ երկրների բարձրաստիճան պատվիրակությունները:

Ելույթ ունենալով գագաթաժողովում՝ Հայաստանի արտգործնախարարն, ըստ ԱԳՆ հաղորդագրության, կարեւորել է Ֆրանկոֆոնիայի շրջանակներում համագործակցությունը եւ կազմակերպության դերը՝ բազմամշակութային երկխոսության միջոցով ժողովուրդների եւ երկրների միջեւ խաղաղության ու համերաշխության ամրապնդման գործում: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը իր գոհունակությունն է հայտնել 2011 թ. Ֆրանկոֆոն քաղաքների գլխավոր ասամբլեան Երեւանում անցկացնելու որոշման կապակցությամբ եւ ընդգծել, որ այդ որոշումը նաեւ կազմակերպության յուրահատուկ գնահատականն է Հայաստանին՝ որպես ակտիվ անդամի եւ վստահելի գործընկերոջ:

Համաժողովի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը նաեւ հանդիպումներ է ունեցել մի շարք երկրների իր գործընկերների հետ:

Գագաթաժողովի ընթացքում կազմակերպվել էր նաեւ Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների մշակութային բազմազանությանը նվիրված «Ֆրանկոֆոնիայի ավան» միջոցառումը, որին Հայաստանը ներկայացված էր հայ հոգեւոր եւ դասական երաժշտության կատարումներով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շվեդիան եւ Լեհաստանը դեմ են ԵՄ-ի ընդլայնմանը, գոնե մինչեւ 2020-ը

Շվեդիայի արտգործնախարար Կառլ Բիլդտը եւ Լեհաստանի ԱԳ նախարար Ռադոսլավ Սիկորսկին Եվրոմիության արտաքին եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթընին են ուղարկում հատուկ մի նամակ, որում նշվում է, որ Եվրոպական միության ընդլայնումը նոր երկրների անդամության միջոցով չի կարող իրականություն դառնալ մոտակա տասը տարիներին:

Նման փաստաթղթի առկայությունն, ըստ «Վեստի.ռու» կայքէջի, հավաստել է Եվրոմիության անանուն պաշտոնական մի ներկայացուցիչ: Ըստ վերջինիս, նման բովանդակությամբ նամակ գոյություն ունի, որում Լեհաստանի ու Շվեդիայի արտգործնախարարությունները ներկայացրել են Եվրոմիության մերձակա հարեւանների հետ հարաբերությունների հայեցակարգ: Փաստաթղթում նաեւ նշվում է, որ ներկա դրությամբ Եվրոմիություն նոր անդամների ընդունման պայմաններ չկան, դրանք բացակայում են: Ընդ որում, Լեհաստանի եւ Շվեդիայի արտգործնախարարների կարծիքով, այս իրավիճակը կպահպանվի առնվազն մինչեւ 2020 թվականը:

Սրա հետ մեկտեղ, Շվեդիան եւ Լեհաստանն առաջարկում են փոխել Եվրոմիության գործընկերության եւ հարեւանության ձեւաչափերը՝ հատկապես առանձնացնելով վեց երկրների մի խումբ, որում ընդգրկված են Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելառուսը, Ուկրաինան եւ Մոլդովան: Նամակի հեղինակների կարծիքով, հարկ է, որ Եվրոմիությունն ընդլայնի համագործակցությունն այս երկրների հետ՝ ստորագրելով գործընկերության մի շարք փաստաթղթեր, որոնցով էլ, սակայն, մոտակա ապագայում այդ երկրների անդամություն Եվրոմիությանը չի նախատեսվում:

Այս հայեցակարգը կարող է քննարկվել երեկ երեկոյան մեկնարկած Եվրոմիության արտգործնախարարների նիստում:

Այս հայեցակարգը, որոշ մեկնաբանությունների համաձայն, ամենից առաջ ուղղված է Եվրոմիությանն Ուկրաինայի անդամության հավանականության դեմ, միեւնույն ժամանակ, վկայելով Եվրոմիության՝ Արեւելյան գործընկերության երկրների հետ զգուշավորություն պահպանելու կեցվածքի մասին:

Ա. Հ.

# Հայաստանն՝ Աֆրիկյան միության ուղղությամբ ակտիվացմամբ

Եգիպտոսում Հայաստանի դեսպան **Արմեն Մելքոնյանը** երեկ Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայում Աֆրիկյան միության հանձնաժողովի նախագահ Ժան Փինգին է հանձնել Աֆրիկյան միությունում դիտորդ, լիազոր ներկայացուցիչ նշանակվելու հավատարմագրերը:

ԱԳՆ տեղեկացմամբ, հավատարմագրերի հանձնմանը հետեւել է առանձնազրույց, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Աֆրիկյան միության միջեւ, ինչպես նաեւ երկկողմ հարթությունում անդամ պետությունների հետ տարբեր բնագավառներում փոխշահավետ համագործակցության ընդլայնման եւ խորացման հեռանկարները:

Արմեն Մելքոնյանը Ժան Փինգին է ներկայացրել Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, ակտիվ ներգրավվածությունը միջազգային եւ տարածաշրջանային գործընթացներում, պարզաբանումներ է տվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի բանակցային գործընթացից: Հանդիպման ընթացքում երկուստեք կարեւորվել է նաեւ պատմության տարբեր հանգրվաններում հայերի ներդրումը մի շարք աֆրիկյան երկրներում, ինչպես օրինակ՝ Եգիպտոսում, Սուդանում, Եթովպիայում:

Նախագահ Ժան Փինգը ողջունել է Աֆրիկյան միությունում դիտորդի կարգավիճակով ներկայացված լինելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը եւ իր գլխավորած կազմակերպության պատրաստակամությունն է հայտնել մեր երկրի հետ հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ համատեղ աշխատելու հարցում:

Ա. Հ.

# Յուրաքանչյուր ադրբեջանցի մի ձայնապնակ ունի

*1-ին էջից*

Պատվիրակությունն ընդգծել է, որ հարեւան երկրի նման քաղաքականությունն էլ ավելի է վտանգում տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը՝ փակուղի տանելով առկա հիմնախնդիրների լուծման միջազգային ջանքերը:

Օրերս ՄԱԿ-ում պաշտոնապես շրջանառության մեջ է դրվել այդ կազմակերպության գլխավոր քարտուղարի «Սովորական սպառազինությունների վերահսկումը տարածաշրջանային եւ ենթատարածաշրջանային մակարդակներում» զեկույցը, որում անդրադարձ է կատարվում Ադրբեջանի կողմից Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրի խախտման խնդրին:

Հիշեցնենք, որ դեռեւս նախորդ շաբաթ ՄԱԿ-ի կենտրոնատեղիում անդամ-երկրների հետ քննարկումներ էին անցկացվում կազմակերպության հատուկ մանդատներ ունեցող ներքին տեղահանված անձանց (IDP) իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ Վալտեր Կալինը եւ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակի հարցերով հատուկ զեկուցող Մարգարետ Սեկագիան, ովքեր առիթներ էին ունեցել վերջին շրջանում այցելելու Հայաստան:

Ադրբեջանական անտեղի հարցադրումներին փախստականների եւ տեղահանվածների վերադարձի առնչությամբ ՄԱԿ-ի ԳՔ-ի ներկայացուցիչը հայտարարել էր, որ ներքին տեղահանված անձինք նախ եւ առաջ պետք է ունենան իրավունք ընտրելու՝ վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը, թե ոչ, ու հավելել էր, որ կարեւորում է, որ համապատասխան պայմաններ լինեն նրանց վերադարձի համար, որոնց նախադրյալները դեռեւս առկա չեն տարածաշրջանում: Կալինը կոչ է արել, որ շահագրգիռ կողմերը գործադրեն բոլոր ջանքերը խաղաղության համաձայնագիր կնքելու ուղղությամբ, որից հետո միայն հնարավոր կլինի արդյունավետորեն անդրադառնալ խնդրո առարկային:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

# Բացվեց Արմենական-ՌԱԿ Մարտունու գրասենյակը

Շուրջ մեկ տարի արդեն Մարտունիում գործում է Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության ակումբը, ղեկավարությամբ Հուսիկ Մխիթարյանի: Այդ կարճ ժամանակում ակումբին հաջողվել է բարի անուն եւ համակրանք ստեղծել քաղաքում, կազմակերպել ծառատունկ եւ հանրօգուտ այլ միջոցառումներ: Նկատի ունենալով այդ, ինչպես նաեւ Մարտունի քաղաքի համեմատաբար աշխույժ կյանքը, Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը որոշել էր կուսակցական գրասենյակ հաստատել քաղաքի կենտրոնում:





Կիրակի օրը, հոկտեմբերի 24-ին, վարչության մի խումբ անդամներ՝ գլխավորությամբ ատենապետ Հակոբ Ավետիքյանի եւ ընկերակցությամբ Ֆիլադելֆիայից ժամանած տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիտ Մկրյանների, եղան Մարտունիում եւ պաշտոնապես բացեցին գրասենյակը, իսկ պրն Բ. Մկրյանը դարձավ 8 նորագիրների, մեծ մասամբ երիտասարդներ, ուխտառուն:

Մինչ այդ արարողությունները վարչության անդամները եղան քաղաքապետարանում եւ բովանդակալից զրույց ունեցան քաղաքապետ Բագրատ Հարությունյանի հետ՝ քաղաքում առկա խնդիրների, իրականացվող ծրագրերի շուրջը:

Գրասենյակի բացումը, նորագիրների անդամագրությամբ, իսկական խանդավառություն էր ստեղծել տեղի ռամկավար ազատականների շարքերում, որոնք խոստացան, ի դեմս ատենապետ Հուսիկ Հարությունյանի, առավել աշխույժ գործունեություն ունենալ եւ նորանոր միջոցառումներ կազմակերպել ազգաբնակչության եւ հատկապես տեղի երիտասարդության համար:

Ռ. Ա.

# «Խթանելով տեղական արտադրությունը՝ պետք է կարողանանք ավելի շատ արտահանել, քան ներմուծել»

Երեկ «Հայելի» ակումբի հյուրերն էին ԱԺ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Վարդան Այվազյանն** ու «Հայրենական ապրանքարտադրողների միության» նախագահ **Վազգեն Սաֆարյանը**: Խոսելով 2011-ի բյուջեի մասին՝ Վ. Սաֆարյանը նշեց. «Եվ արդյունաբերության, և՛ գիտության մեջ պետք է ներդրումներ կատարվեն: Ճիշտ է, գիտության մեջ 1 միլիարդ դրամ հատկացումներ են կատարվելու, սակայն դա նորմատիվից դարձյալ ցածր է»: Ինչ վերաբերում է բյուջեի սոցիալական ուղղվածությանը, Վ. Սաֆարյանը կարծում է, որ դրա մեջ ճշմարտություն կա, սակայն այդ սոցիալական ուղղվածությունը մեզ չի գոհացնում: «Պետք է կարողանանք ունենալ տնտեսությունը զարգացնող բյուջե, իսկ այս բյուջեն փաստորեն սպառողական է», ավելացրեց Վ. Սաֆարյանը՝ նշելով, որ պետք է քայլեր կատարվեն տնտեսական քաղաքականության ոլորտում շտկումներ մտցնելու համար: Վ. Սաֆարյանը տեղեկացրեց, որ եկող տարի արտահանման ծավալները 17 տոկոսով ավելի են լինելու. «Արտահանելու ենք 1,5 միլիարդ դոլարի չափով ապրանքներ, ներմուծման ծավալները դարձյալ բարձր են լինելու, ունենալու ենք շուրջ 3,4 միլիարդ դոլարի չափով ներմուծում»: Վ. Սաֆարյանը նշեց, որ տեղական արտադրությունը խթանելով՝ պետք է կարողանանք ավելի շատ արտահանել, քան ներմուծել:

Ասուլիսի ընթացքում Վարդան Այվազյանը խոսեց պանրի գների բարձրացման մասին: Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, թե տնտեսական ի՞նչ բացատրություն ունի պանրի գների աննախադեպ բարձրացումը, Վ. Այվազյանը նախ նշեց, որ վարչապետ Տիգրան Սարգսյանի հիշատակած «Հայկական պանիր» ծրագիրն ուղղակիորեն կապված էր արտահանման խթանման խնդրին: Ինչ վերաբերում է կոնկրետ գնագոյացմանը՝ ՀՀԿ պատգամավորը պատասխանեց. «Պանրի հետ կապված խնդիրը չեմ ուսումնասիրել»:

Ի. Պ.

# ԽՆԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«**Ազգի**» ողջ անձնակազմը ջերմորեն շնորհավորում է թերթի աշխատակիցներից Սոնա Հովհաննիսյանին եւ ամուսնուն՝ Մարատ Հայրապետյանին՝ իրենց առաջնեկի՝ **Սոֆիայի** ծննդյան առթիվ:

# Արձագանքում է ՏՄՊՊ հանձնաժողովը

«Ազգ» թերթի ս.թ. հոկտեմբերի 22-ի համարում տպագրվել է «ՊԱՆՐԻ ԳՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ» հոդվածը, որում հեղինակն օգտագործել է խեղաթյուրված կամ չճշտված փաստեր ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (Հանձնաժողով) գործունեության մասին:

Օգտվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով ընձեռված իրավունքից եւ հարգելով հանրության՝ ստուգված տեղեկություն ստանալու իրավունքը, տեղեկացնում ենք, որ հոդվածում ներկայացված իրողությունները չափազանցված են եւ կատարված եզրահանգումները ոչ միանշանակ են ներկայացնում իրականությունը:

Լրագրողն անդրադարձել է վերջին օրերին պանրի շուկայում նկատված գների փոփոխություններին՝ Հանձնաժողովին մեղադրելով շուկայում հակամրցակցային համաձայնությունը չբացահայտելու եւ տնտեսվարողներին չպատժելու համար:

Տնտեսության ոլորտում հմտացած լրագրողն առանց հիմնավորման գնաճը կոչում է հակամրցակցային համաձայնություն՝ նույնը նաեւ պետական մարմնից պահանջելով:

Միաժամանակ, լրագրողը նաեւ որեւէ տնտեսական հիմք չի փնտրել հասարակությանը լիարժեք տեղեկատվություն տալու, թե ինչն է իրականում պատճառ դարձել պանրի գնի բարձրացման, եւ փոխարենը իր ենթադրությունները համեմել է անհիմն մեղադրանքներով:

Կցանկանայինք հիշեցնել հարգելի հեղինակին, որ հակամրցակցային համաձայնության արձանագրումը բացառապես ՏՄՊՊՀ գործառույթն է, ուստի նույնիսկ սենսացիոն նյութ գրելու մասնագիտական ազնիվ մղումով հորինված հայտարարություններն առանց Հանձնաժողովի հավաստման որեւէ հիմք չունեն:

Հարգելով հասարակության հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը, եւ հաշվի առնելով պանրի՝ որպես սոցիալական ապրանքատեսակի կարեւորությունը հայ սպառողի համար, Հանձնաժողովն իր կողմից փորձել է պարզել, թե ինչ հիմնավոր պատճառ կա պանրի գնի բարձրացման համար:

Այդ նպատակով Հանձնաժողով են հրավիրվել պանրի արտադրությամբ զբաղվող մի շարք տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ:

Տնտեսվարողների ներկայացրած պարզաբանման համաձայն, գնի բարձրացման հիմնական գործոնը կաթի մթերման գնի ավելացումն է:

Այսպես, պանրի արտադրությամբ զբաղվող ընկերությունների ղեկավարները նշում են, որ 1 կիլոգրամ պանրի ստացման համար պահանջվում է միջինը 9 լիտր կաթ (բազային յուղայնությամբ): Կաթը ձեռք է բերվում գյուղացիական տնտեսություններից: Կապված սեզոնայնության գործոնից, կերի գնի բարձրացումից, ինչպես նաեւ կաթի ծավալների կրճատումից, գյուղացիական տնտեսությունների կողմից վերջին շրջանում առաջարկվող կաթի գինը ավելացել է: Այսպես, եթե հունիս-հուլիս ամիսներին իրենք 1 լիտր կաթի դիմաց վճարել են 110 դրամ, ապա հոկտեմբերի 15-ից կաթը ձեռք են բերել 145 դրամով:

Եթե լրագրողը նպատակ հետապնդեր բազմակողմանի վերլուծություն անելու եւ ոչ թե մերկապարանոց մեղադրանքներ հնչեցնելու, թերեւս կարող էր այս շուկայի տնտեսվարողների շրջանում սեփական հարցումն անցկացնել: Ի վերջո, եթե հոդվածագիրն անկարող էր գտնել սեփական հարցադրման պատասխանը, թերեւս կարող էր դիմել գյուղատնտեսության կամ պարենային արտադրության ոլորտի մասնագետներին, որոնք մատչելի եւ սպառիչ կերպով կբացատրեին, որ ոլորտում առկա են իրողություններ, որոնք, ցավոք, կարող են հանգեցնել պանրի գնի աճին:

Փոխարենը լրագրողը նշում է գնագոյացման մի շարք գործոններ՝ մոռանալով, որ պանիրը նախ եւ առաջ գյուղատնտեսական արտադրանք է, եւ դրա գնագոյացման համար կարեւոր է ուսումնասիրել հատկապես գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցող իրադարձությունները:

Վերադառնալով Հանձնաժողովի գործառույթներին, թեեւ տարբեր առիթներով ստիպված եղել ենք հայտարարելու, որ ՏՄՊՊՀ-ն գների կարգավորման գործառույթ չունի, սակայն, ձեւավորված ոչ ճիշտ ավանդույթի համաձայն, լրագրողները շուկայում ցանկացած ապրանքատեսակի գնի փոփոխության վերաբերյալ պարզաբանման համար դիմում են Հանձնաժողովին:

Հանձնաժողովը գների փոփոխությունը դիտարկում է բացառապես իբրեւ մրցակցության սահմանափակման հնարավոր գործողություն եւ բացառապես բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում:

Հետեւաբար պատասխանելով «Ազգի» լրագրողի հարցադրմանը, Հանձնաժողովն արձանագրել է, որ այդ շուկան կենտրոնացված չէ եւ ազատ մրցակցային է:

Նշենք նաեւ, որ պանրի շուկան նախորդ 10 տարիների ուսումնասիրության արդյունքներով երբեւէ բարձր կենտրոնացվածություն չի ունեցել:

Ավելին՝ բոլորովին վերջերս շուկայի կառուցվածքի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ, որտեղից ստացված տեղեկատվությունը դարձյալ հաստատել է, որ 2010 թվականի առաջին եռամսյակում պանրի արտադրությամբ զբաղվել են 57 տնտեսվարող սուբյեկտ, իսկ երկրորդ եռամսյակում պանրի արտադրությամբ զբաղվել են 78 տնտեսվարող սուբյեկտ: Այսինքն, ընկերությունների թիվը ավելացել է 21-ով, ինչը ազատ տնտեսական մրցակցության մասին վկայող եւս մեկ փաստարկ է:

78 տնտեսվարող սուբյեկտից բաղկացած շուկայում հակամրցակցային համաձայնությունը, մեղմ ասած, անիրական է: Հատկապես որ Հանձնաժողովի կատարած դիտանցումները վկայում են, որ պանրի արժեքը փոխվել է ոչ բոլոր վաճառակետերում եւ ոչ հավասար չափով: Օրինակ, հոկտեմբերի 22-ի տվյալներով «Լոռի» տեսակի պանիրը երեւանյան խոշոր սուպերմարքեթներում վաճառվում է 1900-ից 2400 դրամի սահմանում:

Նույն տեսակի պանրի առավելագույն արժեքը 2800 դրամ է: Սակայն դա վերաբերում է ամենաբարձր յուղայնությամբ օժտված պանրին:

Նշենք, որ հոդվածում ներկայացված վիճակագրությունը այս դեպքում էլ չափազանցված է:

Հաշվի առնելով, որ հոդվածում առկա անճշտությունները մեծ վնաս են հասցնում Հանձնաժողովի հեղինակությանը, հաշվի առնելով վերոնշյալ պարզաբանումները եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 հոդվածով եւ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, խնդրում ենք սույն գրությունը ստանալուց հետո օրենքով նախատեսված ժամկետում, այն տպագրել Ձեր թերթի առաջիկա համարում՝ որպես ՀԵՐՔՈՒՄ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

**ՀՀ ՏՄՊՊՀ հասարակայնության հետ կապերի բաժին**

# Հանձնաժողովը բնակա՞ն է համարում պանրի գների բարձրացումը

*Անտեսելով օրենքի «հակամրցակցային համաձայնություններ» բնորոշող հոդվածի սահմանումները*

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պատասխանը մեր թերթի հոկտեմբերի 22-ի համարում հրապարակված «Պանրի գների աննախադեպ բարձրացումը՝ հայկական ագահության հերթական դրսեւորում» հոդվածին դժվար է հերքում համարել, քանի որ մեր հրապարակման մեջ նշված ոչ մի փաստ չի հերքվել, սակայն ելնելով պատասխանի իրավունք տրամադրելու սկզբունքից, այն ամբողջությամբ հրապարակում ենք վերեւի սյունակներում: Միաժամանակ, չենք կարող չարձագանքել հանձնաժողովի պատասխանի որոշ դրույթներին, քանի որ դրանցում կան ե՛ւ իրականության հետ կապ չունեցող պնդումներ, ե՛ւ տրամաբանությանն ու օրենքին հակասող բացատրություններ:

Նախ մեղադրանք է ներկայացվում, ըստ որի՝ պանրի շուկայում գների աճը համարել ենք հակամրցակցային համաձայնություն միայն ենթադրությունների հիման վրա եւ «համեմել անհիմն մեղադրանքներով»: Այնուհետեւ նշվում է, որ հակամրցակցային համաձայնության արձանագրումը բացառապես հանձնաժողովի գործառույթն է, եւ վերջապես, որ հանձնաժողովը նման համաձայնությունը հնարավոր է համարում միայն բարձր կենտրոնացվածություն ունեցող շուկաներում, իսկ պանրի շուկան ազատ է եւ մրցակցային:

Սկսենք վերջինից: Մեր հրապարակման մեջ եւս նշել ենք, որ պանրի շուկայում գերիշխող դիրք ունեցող չկա: Այս առումով անհասկանալի է, թե մեր ո՞ր գրածի ի՞նչն է հերքվում այս պատասխանում:

Այնուհետեւ, հանձնաժողովի անդամները կա՛մ լավ չեն ուսումնասիրել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածը, կա՛մ լավ են ուսումնասիրել, պարզապես մտածել են, որ մենք այդ օրենքի կամ այդ օրենքի 5-րդ հոդվածի տեղը չգիտենք: Ուրեմն, այդ հոդվածում շարադրվում են բոլոր այն դեպքերը, որոնց առկայության դեպքում հակամրցակցային համաձայնություններ են արձանագրվում, եւ չկա ոչ մի խոսք այն մասին, որ դրա համար պարտադիր է, որ տվյալ ապրանքային շուկայում բարձր կենտրոնացվածություն լինի: Կրկնում ենք, ոչ մի խոսք: Օրենքի այդ հոդվածում հակամրցակցային համաձայնությունները բնորոշվում են որպես բացառապես երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտների կողմից միեւնույն ապրանքային շուկայում, որոշակի ժամանակահատվածում, գների բարձրացում, պահպանում կամ իջեցում: Հիմա նորից դիտարկենք, թե ի՞նչ է տեղի ունեցել պանրի գների հետ:

Պանրի («Լոռի» տեսակի) գները, միանգամից, միաժամանակ, ընդամենը 1 օրվա ընթացքում, բարձրացել են՝ 400-1000 դրամով կամ մոտավորապես 30-60 տոկոսով, նախկին 1600-1800 դրամի փոխարեն հասնելով 2000-2800 դրամի 1 կգ-ի համար: Երկու եւ ավելի տնտեսվարողների կողմից տեղի է ունեցել միեւնույն ապրանքի գների միաժամանակ բարձրացում որոշակի կոնկրետ ժամանակահատվածում: Հետեւաբար, հանձնաժողովը ոչ թե պետք է «դիտարկեր» այդ երեւույթը որպես հակամրցակցային համաձայնություն միայն բարձր կենտրոնացվածության շուկայի դեպքում եւ նման կերպ խուսափեր պատասխանատվություն ստանձնելուց, այլ, ինչպես օրենքն է պահանջում, ուսումնասիրություն սկսեր, թե ինչպե՞ս է պատահել, որ երկու եւ ավելի տնտեսվարողներ (7-8 ամենախոշոր արտադրողները) միաժամանակ, մեկ օրում, բարձրացրել են նույն ապրանքի գները: Դրանից հետո արդեն պետք է իրականացներ օրենքով իրեն վերապահված գործառույթը հակամրցակցային համաձայնության արձանագրման մասին:

Ինչ մնում է մեր եզրակացությունը հակամրցակցային համաձայնության առկայության մասին հանձնաժողովի կողմից անհիմն կամ սենսացիոն համարելուն, ապա այստեղ գործ ունենք ընկալման խնդրի հետ: Իսկ եթե նման համաձայնության արձանագրման գործառույթ ունի միայն հանձնաժողովը, ապա դա չի նշանակում, որ ստեղծված իրավիճակի, փաստերի, օրենսդրության դրույթների վերլուծության հիման վրա նման եզրակացության հանգելու իրավունք ուրիշ ոչ մեկը չունի: Այլոց իրավունքները սահմանափակելու իրավունք հանձնաժողովը հաստատապես չունի, իսկ վերոնշյալ բոլոր գործոնների առկայության դեպքում պանիր արտադրողների բացատրությունները լսելը, ինչպես խորհուրդ է տալիս հանձնաժողովը, այնքան էլ էական չէ: Թեեւ մեր ջանքերը՝ դրանք լսելու ուղղությամբ, արդյունք չտվեցին:

Այժմ պանրի գնի բարձրացման «տնտեսական հիմքի» մասին, որ իբր չենք փնտրել մեր նախորդ հրապարակման մեջ: Նախապես ներողություն ենք խնդրում ընթերցողներից, բայց ստիպված ենք ամբողջությամբ մեջբերել այդ «հիմքի» բացակայության վերաբերյալ մեր հիմնավորումները վերոնշյալ հոդվածից. «Կաթնամթերքի միջազգային գներ հասկացություն չենք լսել, եւ բացի դրանից, այս առումով արտերկրից կախում կարծես թե չունենք: Մեր երկրում կաթ եւ կաթնամթերք արտադրվում է, մթերվում եւ պանիր դառնում: Կովերի զանգվածային անկում, նրանց մեջ համաճարակային հիվանդության տարածում կամ որեւէ այլ արտակարգ բան այս օրերին եւս տեղի չի ունեցել: Հայաստանի արոտավայրերում զանգվածային հրդեհներ աշնան այս ամիսներին նույնպես չեն եղել: Վերջ ի վերջո, էլեկտրաէներգիա կամ գազի սակագին նույնպես չի բարձրացել, ոչ էլ այս արտադրողների ստվերային գործունեության մեծ կամ փոքր բացահայտումներ են եղել»: Ինչպես տեսնում եք, հանձնաժողովում կա՛մ ուշադիր չեն կարդում, կա՛մ, այսպես ասենք, չեն ցանկանում ուշադիր կարդալ:

Եվ վերջապես, հանձնաժողովի մատնանշած գործոնի մասին, որը պատճառ է դարձել գնի բարձրացման համար: Դա կաթի մթերման գնի բարձրացումն է 35 դրամով: Նկատի ունենալով հենց հանձնաժողովի պատասխանում նշվող տեղեկությունն այն մասին, որ 1 կգ պանրի համար պահանջվում է միջինը 9 կգ կաթ, ապա մթերման գնի նման բարձրացման դեպքում պանրի 1 կգ-ի գինը առավելագույնը պետք է բարձրանար 315 դրամով, այլ ոչ թե 500 կամ 1000 դրամով: Մի՞թե հանձնաժողովի անդամներից մեկը այդ մասին հարց չուղղեց պանիր արտադրողներին: Կամ գուցե տնտեսվարողների կարծիքը լսելու մասին խորհուրդ տալու փոխարեն, հանձնաժողովում տեղի ունեցած այդ հանդիպմանը հրավիրեին նաեւ լրագրողների՞ն, որպեսզի այդ եւ մյուս հարցերն ուղղեինք նրանց:

Մնում է միայն ավելացնել, որ պարզապես ցավալի է, որ պանիր արտադրողները թքած ունեն իրենց սպառողների շահերի եւ նրանց գնողունակության վրա: Անշուշտ, տնտեսվարողները սոցիալական հիմնադրամներ չեն, զբաղվում են բիզնեսով եւ բավականին շահութաբեր բիզնեսով, բայց երբ տեղական սպառողները սկսեն ներմուծվող պանիր գնել, այդ նույն արտադրողները վայնասուն կբարձրացնեն եւ մոռանալով, որ դա իրենց արածի տրամաբանական հետեւանքն է, կսկսեն անիմաստ կոչեր անել գնելու տեղական-հայրենական արտադրանքը:

Սակայն կրկնակի ցավալի է, երբ շուկայական տրամաբանությունը ձեւախեղող այս երեւույթները մեր տնտեսության մեջ մնում են անարձագանք դրանց թույլ չտալուն կոչված մարմնի կողմից: Ի վերջո, հանձնաժողովի անդամները պետական աշխատավարձ են ստանում եւ բավականին բարձր՝ 500 հազար դրամի մոտ, որի դիմաց նրանք պարտավոր են թույլ չտալ գոնե առաջին անհրաժեշտության ապրանքների գնային անոմալիաները: Հատուկ դժվար հասկացողների համար նշենք, որ խոսքը ոչ թե գներ որոշելու խորհրդային կամ սոցիալիստական գործելակերպի, այլ դրանց ոչ շուկայական ձեւախեղումները թույլ չտալու մասին է:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Լրագրողական զեկույց. Ադրբեջանը՝ վախի մթնոլորտում

Միջազգային մի շարք լրագրողական կազմակերպություններ Ադրբեջանում նոյեմբերի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախաշեմին զեկույց են հրապարակել «Կարծիք արտահայտելու ազատությունն Ադրբեջանում վտանգված է» թեմայով: Դրանում, ըստ «Ազադլիգ» ռադիոկայանի, մասնավորապես նշված է, որ Ադրբեջանը չի կատարում արտահայտման ազատությունն ապահովելու գործում ստանձնած միջազգային պարտավորությունները:

Զեկույցի հեղինակներից «Article 19» կազմակերպության գործադիր տնօրենն այդ կապակցությամբ նշել է, որ Ադրբեջանում լրագրողների վրա հարձակվողները վստահ են, որ կմնան անպատիժ: «Ադրբեջանում առկա վախի եւ անպատժելիության մթնոլորտի պատճառը նման հանցագործությունները չբացահայտելն է»: Ըստ «Article 19»-ի, վախի այդ մթնոլորտը խիստ անցանկալի է նոյեմբերի 7-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար:

Զեկույցը պատրաստվել է սեպտեմբերին Ադրբեջան այցելած առաքելության հավաքած փաստերի հիման վրա: Փաստաթղթում Ադրբեջանի կառավարությանը խորհուրդներ են տրվում եւ նշվում, որ վախի մթնոլորտը երկրում վերացնելու եւ արտահայտման ազատության պայման ստեղծելու համար կառավարությունը պետք է ապահովի լրագրողների դեմ իրագործված հանցագործությունների արդարացի հետաքննությունը, ազատ արձակի ձերբակալված լրագրողներին ու բլոգերներին, վերացնի զրպարտության եւ վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքների նորմերը:

Զեկույցը պատրաստել են Ադրբեջանի գծով Միջազգային համագործակցության խումբ ստեղծած ներքոհիշյալ կազմակերպությունները՝ «Articlle 19», «Freedom House», «Indexon Censorship», «International Federation of Journalistis», «Media Diversity Institute», «Open Society Foundations», «Press Now», «Reporters Without Borders», «World Association of Newspapers and News Publishers»:

Ա. Հ.

# Սերդյուկովին զանգահարել են Կրեմլից

«Կրեմլը պաշտպանության նախարարությունից կտրուկ տոնով պահանջել է հստակ աշխատանք տանել ռազմական ոլորտում բարեփոխումները դրականորեն ներկայացնելու ուղղությամբ», այս մասին գրում է ռուսական «Նեզավիսիմայա գազետան»: Ռուսական պարբերականը Կրեմլի՝ ՊՆ-ին ուղղված «կտրուկ տոնը» բացատրում է օրեր առաջ Ռյազանի դեսանտայինների ուսումնական կենտրոնում տեղի ունեցած միջադեպով, որին անմիջական մասնակից է եղել նախարար Սերդյուկովը: «**Ազգը**» հոկտեմբերի 22-ի համարում գրեց, որ Ռյազանի կենտրոնում Սերդյուկովն իրեն թույլ է տվել «անպարկեշտ արտահայտություններ», որոնց կապակցությամբ վարչապետ Պուտինը նույնիսկ պահանջել է նրանից հրաժարական տալ: Նշենք նաեւ, որ ՌԴ կառավարության անանուն աղբյուրը «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը անմիջապես հայտարարեց, որ «Սերդյուկովի հրաժարականի մասին լուրերը անհեթեթություն են եւ կարիք չունեն արձագանքի»: Սա այն դեպքում, երբ ՌԴ ՊՆ դեսանտային ուժերի հրամանատար Շամանովը հաստատեց, որ Ռյազանի ուսումնական կենտրոնում նախարարն ու կենտրոնի հրամանատարը «նման խոսակցություն ունեցել են իրար հետ»: Բնականաբար, Կրեմլը «անհեթեթություն»-ից ելնելով «կտրուկ տոնով» չէր խոսի ՊՆ-ի հետ, հետեւաբար այստեղ «մի բան այն չէ», մանավանդ որ, ռուսական ԶԼՄ-ների փոխանցմամբ, միջադեպի կապակցությամբ ակտիվ քննարկումներ են ընթանում ինչպես ՊՆ-ում, այնպես էլ Պետական դումայում: Մասնավորապես՝ պաշտպանության նախարարության բարձր սպայական կազմը պաշտպանում է, բնականաբար, նախարարին, իսկ Պետդումայում նույնիսկ ստեղծվել է հատուկ կոմիտե՝ Դումայի պաշտպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Միխաիլ Բաբիչի գլխավորությամբ: Ինչպես նշվում է՝ հատուկ կոմիտեին «միջադեպի քննության համար կտրամադրվի 2 շաբաթ, որից հետո պատգամավորներին կներկայացվի զեկույց»:

Հ. Ա.

# Թուրքիան եւ Լիբանանը կհամագործակցեն էներգետիկ ոլորտում

Աշխատանքային այցով Թուրքիայում էր գտնվում Լիբանանի էներգետիկայի եւ ջրային ռեսուրսների նախարար Ջուբրան Բասիլը՝ էներգետիկ եւ նավթային ոլորտներում համագործակցության համատեղ նախագծերը քննարկելու նպատակով: Նկատենք, որ այս հանդիպմանը նախորդել էին կողմերի համապատասխան ոլորտների ներկայացուցիչների հանդիպումները, որոնք ուղղված էին Թուրքիայից, ինչպես նաեւ Թուրքիայի տարածքով այլ երկրներից Լիբանան էլեկտրաէներգիա եւ գազ ներմուծելու հնարավորությունների քննարկմանը: Նախարարի այցի շրջանակներում կողմերը համաձայնության են եկել այն հիմնական ֆայլերի շուրջը, որոնք կպահանջվեն այդ նախագծերը կյանքի կոչելու համար: Բացի այդ՝ համաձայնություն է ձեռք բերվել առաջիկայում եռակողմ, ապա նաեւ քառակողմ՝ Թուրքիա-Լիբանան-Սիրիա-Հորդանան, հանդիպման վերաբերյալ: Հանդիպումից հետո Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յաճարը լրագրողների հետ հանդիպմանը հայտարարել է, որ Թուրքիան պատրաստակամ է Լիբանան էլեկտրաէներգիա մատակարարելու այժմ, իսկ 15 ամսից՝ տեխնիկական ամբողջական հնարավորությունների առկայության պարագայում, նաեւ Սիրիայի տարածքով գազ: Ջուբրան Բասիլն իր հերթին նշել է, որ այս նախագծի վերաբերյալ Սիրիայի հետ նախնական պայմանավորվածություններ կան, իսկ իր այցի հիմնական նպատակը Թուրքիայից էլեկտրաէներգիայի եւ գազի գնման մանրամասների քննարկումն է: Նախարարի խոսքով՝ դրանից հետո նոր միայն հնարավոր կլինի խոսել վերջնական եռակողմ համաձայնության մասին: Նախարար Ջուբրան Բասիլը հավելել է նաեւ, որ քանի դեռ ներկայումս Թուրքիան Սիրիան եւ Լիբանանը կապող գազամուղի կառուցմանն անհրաժեշտ 15 ամիսն առջեւում է, Լիբանանը քննարկում է բնական խտացված գազի մատակարարման հնարավորությունը:

ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# Բջջային հեռախոսի վրա մանրէներն ավելի շատ են, քան կոճկի ներքանի տակ

Մանչեսթրի համալսարանի մանրէաբանները պարզել են, որ բջջային հեռախոսի իրանի վրա 5 անգամ ավելի շատ մանրէներ կան, քան զուգարանակոնքի նստատեղի վրա կամ կոշկի ներբանի տակ: Այդ մանրէների թվում է նույնիսկ ոսկեգույն ստաֆիլակոկը, որ կրում է աշխարհի բնակչության 20 տոկոսը: Ոմանք դրանից չեն վախենում, բայց թույլ իմունիտետ ունեցողներին այդ մանրէն սպառնում է տարբեր բաներով՝ մաշկային թեթեւ հիվանդությունից մինչեւ մենինգիտ:

Լոնդոնի «Սան» թերթը նշում է, որ գիտնականները բջջային հեռախոսի վրա մանրէների այդ առատությունը բացատրում են նրանով, որ հեռախոսի իրանի վրա ցայտում են թքի մասնիկներ, որոնք պարունակում են բերանի խոռոչում գտնվող մանրէների բոլոր տեսակները: Բացի դրանից, հեռախոսի վրա միկրոօրգանիզմներ են հայտնվում մարդկանց կեղտոտ ձեռքերից:

Եվս մեկ հանգամանք է հեռախոսը տաք տեղում պահելը: Խոսելիս եւ լիցքավորելիս այն ավելի շատ է տաքանում: Իսկ ջերմությունից մանրէները էլ ավելի լավ են բազմանում:

Գիտնականները խորհուրդ են տալիս այս ամենը կանխելու համար օրական երկու անգամ հեռախոսը մաքրել սպիրտային հատուկ անձեռոցիկներով, որոնցով մաքրում են մնացյալ կազմտեխնիկան:

Սակայն վտանգավոր են ոչ միայն բջջային հեռախոսները, այլեւ ձեռքերի չորացման սարքերը, կանացի պայուսակները, կոսմետիկան եւ ցնցուղը: Գիտնականները խորհուրդ են տալիս ձեռքերը սրբել թղթե անձեռոցիկներով, պայուսակները չդնել հատակին եւ խոհանոցի սեղանի վրա, լոգարանում չպահել դեկորատիվ կոսմետիկա եւ 6 ամիսը մեկ փոխել ցնցուղը: Ցնցուղի փողրակի մեջ 100 անգամ ավելի շատ մանրէ կա, քան խոհանոցի ծորակի մեջ: Ուստի լողանալուց առաջ պետք է ջուրը հոսեցնել գոնե կես րոպե:

Մանրէների բազմացման առավել նպաստավոր վայրերից մեկն էլ ավտոմեքենան է. վարորդների ընդամենը 2 տոկոսն է դրա ներսը մաքրում ամեն շաբաթ:



# Ֆրանսիայում գործադուլների վնասը՝ օրական 200-400 մլն եվրո

Ֆրանսիայի ֆինանսների նախարար **Քրիստին Լագարդը** երեկ հայտարարեց, որ շարունակվող գործադուլները երկրին օրական 200-400 մլն եվրոյի վնաս են պատճառում:

Բողոքի զանգվածային ելույթները սկսվեցին սեպտեմբերին: Երկրի որոշ շրջաններում տեղի ունեցան անկարգություններ, ոստիկանների եւ ցուցարարների բախումներ: Խախտվեց Ֆրանսիայի հասարակական տրանսպորտի, երկրի օդանավակայանների եւ երկաթուղիների աշխատանքը:

Հոկտեմբերի 15-ին գործադուլավորներին միացան նավթամշակման գործարանների աշխատողները: Սկսվեց վառելիքի ճգնաժամ: Փարիզի շրջանի բենզինի եւ օդանավակայանների կերոսինի գլխավոր մատակարար «Գրանպյուի» գործարանի աշխատանքը վերսկսվեց միայն ոստիկանության միջամտությունից հետո:

Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ մարդկանց դժգոհության պատճառը կենսաթոշակային բարեփոխման օրինագիծն է, որով նախատեսվում է կենսաթոշակային տարիքը 60-ից հասցնել 62-ի: Հոկտեմբերի 22-ին Սենատը որոշ փոփոխություններով հավանություն տվեց օրինագծին (Ազգային ժողովը դա արել էր ավելի վաղ): Վերջնական քվեարկությունը նշանակված է հոկտեմբերի 27-ին: Ընդունման դեպքում փաստաթուղթը պետք է վավերացվի նախագահ Նիկոլա Սարկոզիի ստորագրությամբ:



Ի դեպ, գործադուլներից հատկապես շատ է տուժում Ֆրանսիայի քիմիական արդյունաբերությունը: Անցյալ շաբաթավերջին դրա կրած ընդհանուր վնասը 1 մլրդ եվրո էր, իսկ օրական վնասը առնվազն 100 միլիոն է: Դա լուրջ հարված է համաշխարհային ճգնաժամից հետո վերականգնվող երկրի տնտեսությանը:

# Հունաստանն օգնություն է խնդրում անօրինական ներգաղթի կասեցման հարցում

Հունաստանի իշխանությունները Եվրամիությանը խնդրել են սահմանապահ պարեկախումբ ուղարկել հույն-թուրքական սահմանում անօրինական ներգաղթը կանխելու նպատակով: Համապատասխան նամակներ են ուղարկվել ԵՄ ներքին գործերի հանձնակատար Սեսիլիա Մալմստրյոմին եւ Ներքին գործերի եվրոպական խորհրդի նախագահ Աննեմի Տուրտելբումին:

Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ վերջին ամիսներին Հունաստանում նկատվում է Թուրքիայից եկող անօրինական ներգաղթյալների հոսքի զգալի աճ: Հանրային պաշտպանության նախարար Խրիստոս Պապուտսիսի խոսքերով, երրորդ երկրների փախստականներ թուրքական տարածքով անցնում են ԵՄ անդամ Հունաստան, որտեղից հետագայում տեղափոխվեն եվրոպական այլ երկրներ:

Նախարարը կարծում է, որ տվյալ երեւույթը «որոշակիորեն համաեվրոպական խնդիր է»: Ենթադրվում է, որ ներգաղթյալների հոսքը կարող են կասեցնել ԵՄ սահմանապահ պարեկության ջոկատները՝ ԵՄ սահմանների պաշտպանության Frontex գործակալության աջակցությամբ:

Հունաստանով դեպի ԵՄ այլ երկրներ թափանցում են ավելի մեծ թվով անօրինական ներգաղթյալներ, քան ԵՄ մեկ ուրիշ երկրի տարածքով: Վիճակագրական տվյալների համաձայն, 2008-ին Եվրոպա թափանցած անօրինական ներգաղթյալների 50 տոկոսը ձերբակալվել է Հունաստանի տարածքում: 2010-ի 8 ամիսներին այդ ցուցանիշը հասել է 90 տոկոսի:

# WikiLeaks-ը հրապարակել է Իրաքին առնչվող 400 հազար փաստաթուղթ

WikiLeaks նախագիծը շաբաթավերջին հատուկ կայքում Պենտագոնի 400 հազար փաստաթուղթ է հրապարակել Իրաքի պատերազմի վերաբերյալ:

Նյութերի բովանդակությանը առաջինը ծանոթացել է Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը: Փաստաթղթերը մասնավորապես պարունակում են 2003-2009 թթ. օկուպացիոն ուժերի գործողություններից տուժած կամ զոհված բոլոր անձանց գործերը:

«Ալ Ջազիրայի» պնդման համաձայն, Պենտագոնն արձանագրել է 100 հազար մահ, ըստ որում՝ զոհերի 63 տոկոսը կազմում են խաղաղ բնակիչները: Տուժածների ընդհանուր թիվը 285 հազար է:

«Գարդիան» թերթը նշում է, որ հրապարակված փաստաթղթերի համաձայն, մինչեւ օրս առնվազն 15 հազար զոհ դուրս էր մնացել հաշվառումից:

Նյութերը պատմում են նաեւ կալանավորների նկատմամբ իրաքցի ոստիկանների եւ զինվորականների կիրառած խոշտանգումների մասին: Կտտանքների բազմաթիվ դեպքեր չեն քննվել, մեղավորները չեն պատժվել: Ի դեպ, Իրաքի ներկայիս վարչապետ ալ Մալիքին 2006-2009 թթ. իրաքյան ուժերի գլխավոր հրամանատարն էր: Սակայն հրապարակված փաստաթղթերում չկան ուղղակի վկայություններ, թե նա տեղյակ է եղել դաժան կտտանքների ու ծեծի դեպքերին:

Նաեւ տեղեկություններ կան, որ Blackwater պահնորդական ձեռնարկության աշխատակիցները քանիցս կրակ են բացել խաղաղ իրաքցիների վրա:

Պենտագոնն արդեն հայտարարել է, որ նման տվյալների հրապարակումը կարող է լուրջ վնաս պատճառել ամերիկացի զինվորականներին, ինչպես նաեւ օկուպացիոն ուժերի հետ համագործակցող իրաքցիներին (եթե նրանց անունները կան փաստաթղթերում):

# Երկար սպասված հանդիպում՝ Երեւանում այսօր կայանալու է Ջո Կոկերի համերգը



«Երեւանյան հեռանկարներ» 11-րդ երաժշտական միջազգային փառատոնի շրջանակներում այսօր Երեւանում եզակի համերգային ծրագրով հանդես է գալու համաշխարհային ռոք եւ բլյուզ երաժշտության լեգենդ Ջո Կոկերը: Երեկ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում լրագրողների հետ հանդիպման ժամանակ «Երեւանյան հեռանկարներ» փառատոնի գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր **Ստեփան Ռոստոմյանը** նշեց. «Հաշվի առնելով Ջո Կոկերի տարիքն ու ֆիզ շրջագայելու փաստը՝ բավականին բարդ էր նրան Հայաստան հրավիրելը, բայց մեզ դա հաջողվեց»: Այս գործում, ըստ Ս. Ռոստոմյանի, իրենց մեծապես օգնել է փառատոնի կենսագրությունն ու այն աստղերի ցուցակը, որոնք փառատոնի շրջանակներում ելույթ են ունեցել Հայաստանում: Ջո Կոկերի համերգը տեղի է ունենալու Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Բացի նոր ծրագրից համերգի ընթացքում երգիչը կատարելու է նաեւ հայտնի ու սիրված հիթեր: Ջո Կոկերի համերգը ֆինանսավորում է «Ամերիա» բանկը, համերգը կազմակերպվել է բանկի 100-ամյակի կապակցությամբ: Տոմսերը արժեքը լինելու է 30-60 հազար դրամի սահմաններում: Խոսելով տոմսերի այսքան թանկ լինելու մասին՝ Ս. Ռոստոմյանը նշեց. «Մենք որեւէ պատասխան տալ չենք կարող: Երգչին Հայաստան բերելը կապված էր մեծ ֆինանսական միջոցների հետ»: Համերգի համար «Ամերիա» բանկը բավականին գումար է ծախսել, եւ ինչ-որ ձեւով պետք է կոմպենսացներ այն:

«Երեւանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում նոյեմբերի 15-ին Հայաստանում համերգային ծրագրով հանդես է գալու նաեւ սերբ հայտնի երգիչ ու երգահան Գորան Բրեգովիչն իր նվագախմբով: Դեկտեմբերի 3-ին էլ դարձյալ վերոնշյալ փառատոնի շրջանակներում՝ Երեւանում կկայանա իսպանացի հանրահայտ տենոր Պլասիդո Դոմինգոյի համերգը: «Երեւանյան հեռանկարների» գեղ. ղեկավարի փոխանցմամբ՝ Պլասիդո Դոմինգոն շատ ուրախ է, որ գալու է Հայաստան: Իսպանացի տենորը հանդես է գալու հայտնի սոպրանո, «Գրեմի» մրցանակակիր Աննա Մարտինեսի հետ:

**Ի. Պ.**

# Ցավակցություն

**Հարություն Երեցյանի վաղաժամ մահը նրա երեւանյան վաղեմի բարեկամներին եւ ընկերներին խոր վիշտ պատճառեց՝ քանզի նրա թողած հիշատակները մինչեւ օրս մեր մեջ կենդանի են եւ չխամրող՝ անցնող ժամանակների արագահոս հորձանուտում: Վերին աստիճանի հայեցի, ազգասեր, կենսասեր, հմայիչ ժպիտը դեմքին, բոլորիս մոտ առաջացնում էր պատկառանք իր անձի հանդեպ եւ իր ողջ էությամբ համահունչ էր «60-ականների» առաջավոր գաղափարների հետ՝ վկա իր դիպլոմային ավարտական բեմադրությունը Երեւանի Գեղարվեստաթատրական ինստիտուտում: Իսկ նրա կյանքի ամերիկյան շրջանի ազգաշահ գործունեությունը մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում հայտնի է բոլորին: Տարբեր տարիներին լինելով Ամերիկայում, մենք ականատես եղանք նրա հիմնադրած «Արփիլ» հանրահայտ գրատանը, ուր կարելի էր տեսնել ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում տպագրված հայագիտական գրականություն: Հայաստանյան եւ սփյուռքյան կերպարվեստագետների քանի-քանի ցուցահանդեսներ է կազմակերպել մեր սիրելի Հարութը՝ կենդանի պահելով Հայաստան-Սփյուռք կապը:**

**Նրա անժամանակ մահը իսկապես ծանր կորուստ է մեր բոլորի, ողջ հայ հոգեւոր մշակույթի համար, սակայն նրա թողած բարի հիշատակները ապրելու են գալիք օրերում:**

***ԱՐԱ ՇԻՐԱԶ,***
***ՌՈԲԵՐՏ ԷԼԻԲԵԿՅԱՆ,***
***ԷԴՈՒԱՐԴ ԽԱՐԱԶՅԱՆ,***
***ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ,***
***ՊՈՂՈՍ ՀԱՅԹԱՅԱՆ***

*ԱԼԱՎԵՐԴԻ*

# «Թատերական Լոռի XX» հոբելյանական փառատոնը բացվեց Ալավերդիում

Ալավերդիում բացվեց 20-րդ հոբելյանական փառատոնի վարագույրը: Այն հիմնվել է 1977 թվականին ՀՀ ժողովրդական արտիստ Վոլոդյա Գրիգորյանի, Վալերի Պառանյանի նախաձեռնությամբ եւ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ ՀԹԸ նախագահ Հրաչյա Ղափլանյանի աջակցությամբ: Սկզբնական փուլում լինելով ժողովրդական թատրոնների փառատոն, այն մեծ նշանակություն է ունեցել մեր երկրում ժողովրդական եւ թատերական ինքնագործունեության զարգացման համար:

Հոբելյանական փառատոնին մասնակցում են եւ ներկայացումներով հանդես կգան Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնը, Վանաձորի, Կապանի, Գորիսի, Արտաշատի, Գավառի պետական թատրոնները, ինքնագործ ու տիկնիկային քսաներկու թատերախմբեր հանրապետության տարբեր բնակավայրերից: Փառատոնում հանդես կգա նաեւ Վրաստանի Ջեստաֆոնի քաղաքի պետական դրամատիկական թատրոնը: Փառատոնի անցկացումը հնարավոր է դարձել ՀՀ Մշակույթի նախարարության եւ «Վալլեքս» խմբի ֆինանսական աջակցության շնորհիվ, իսկ կազմակերպիչներն են Ալավերդու քաղաքապետարանը, ՀԹԳ Միությունը:

Փառատոնի բացմանը մասնակցում էին փառատոնի 33-ամյա գոյության ընթացքում ամենաշատ մասնակցած թատերախմբերի ղեկավարները եւ ներկայացուցիչները, որոնք Ալավերդու քաղաքապետի կողմից ստացան «Փառատոնի բարեկամ» հոբելյանական մեդալ: Ելույթներ ունեցան ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանը, Վահե Շահվերդյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը եւ ուրիշներ, որոնք կարեւորեցին այս փառատոնի դերը մարզերում թատերական կյանքի աշխուժացման, միջմարզային կապերի ամրապնդման գործում: Փառատոնի բացմանը ներկայացվեց Երեւանի «Նորք» թատրոնի Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւ» ներկայացումը:

Փառատոնի տնօրեն Հրաչյա Պապինյանը նշում է, որ գնալով մեծանում է այն թատերական կոլեկտիվների թիվը, որոնք ցանկանում են մասնակցել փառատոնին: Կազմակերպիչները նկատի ունենալով ամեն տարի ավելացող թատերական կոլեկտիվների քանակը, նախատեսում են, որ 21-րդ փառատոնը կանցկացվի ոչ միայն Ալավերդիում, այլեւ մարզկենտրոնում, ինչպես նաեւ Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ախթալա, եւ Թումանյան քաղաքներում:

Փառատոնը կավարտվի հոկտեմբերի 27-ին մրցանակաբաշխությամբ:

**Ս. Մ.**

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Երեւանի «Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ-ն արտադրական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 6,6 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 1-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ԵՐԵՎԱՆ*

# Արդի դրամատուրգիայի 1-ին միջազգային փառատոն՝ հոկտեմբերի 25-31-ը

**Մինչ անկախությունը ԽՍՀՄ երկրների դրամատուրգները սերտ կապեր ունեին ու բազմաթիվ համատեղ ծրագրեր էին իրականացնում: Այդ ծրագրերը սառեցվեցին հասկանալի պատճառներով եւ կտրվեց կապը, դրամատուրգների, թատրագետների, բեմադրիչների ու նաեւ քննադատների միջեւ: Ազգային թատերական ստեղծագործական միավորումը (ԱԹՍՄ), ՀՀ մշակույթի նախարարության եւ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) աջակցությամբ, հոկտեմբերի 25-31-ը առաջին անգամ անցկացնում են արդի դրամատուրգիայի միջազգային բաց փառատոնը, որը կրում է «Ներկայի վերականգնումը» խորագիրը: Փառատոնին մասնակցում են ԱՊՀ, Բալթյան երկրների եւ Վրաստանի առաջատար դրամատուրգներ, թատերական գործիչներ, քննադատներ: Փառատոնի նպատակն է բացահայտել նոր անուններ, գտնել ստեղծագործական համագործակցության եզրեր ու հեռանկարային ծրագրեր, իրականացնել միջպետական բեմադրական նախագծեր, տեղեկացրեց փառատոնի նախագահ Արա Խզմալյանը ու ներկայացրեց փառատոնին մասնակից 34 պատվավոր հյուրերին եւ ժյուրիին: «Ազգի» այն հարցին, թե փառատոնին երիտասարդ ստեղծագործողները մասնակցելու են թե ոչ, պրն Խզմալյանը նշեց, որ հատուկ նրանց համար կանցկացվի վարպետության դասեր Ուկրաինայից ժամանած հանրաճանաչ մասնագետների կողմից, կլինեն սեմինարներ, քննարկումներ: Իսկ հյուրերին կտրվի հնարավորություն դիտել հայ երիտասարդ բեմադրիչների 4 ներկայացումները, որպեսզի ավելի հստակ կարողանան գնահատել հայ դրամատուրգիայի մեխանիզմները: Փառատոնի մեկնարկին ներկայացվեց «Ներկայի վերականգնումը» 605 էջանոց ծավալուն ժողովածուն, որում ընդգրկված են 12 երկրներից մեկական պիես (բացի ՌԴ-ից՝ 3 հատ), հեղինակների ինքնակենսագրականներն ու արդի թատրոնն ու դրամատուրգիան լուսաբանող թատերական հոդվածներ: Հայաստանից ժողովածուում տեղ է գտել Կարինե Խոդիկյանի «Դարպասը» պիեսը, Հենրիկ Հովհաննիսյանի, Արա Խզմալյանի հոդվածները եւ կենսագրականները: Ի դեպ, փառատոնը ընտրել է փորձագիտական խորհուրդ եւ ժյուրի, որոնք էլ փառատոնի օրերին ընթերցվող պիեսները, գրաքննական հոդվածները կգնահատեն եւ կարժանացնեն դրամական մրցանակների՝ 1-ին տեղ 100.000, 2-րդ՝ 50.000 եւ 3-րդ՝ 30.000 ռուսական ռուբլի: Պիեսի հեղինակները պետք է փորձեն 50 րոպեի ընթացքում ներկայացնել իրենց գործը, որից հետո միայն կընտրվի այն պիեսները, որոնք հետագայում համատեղ կբեմադրվեն տարբեր երկրներում:**

**Բելառուսական դրամատուրգիայի հանրապետական թատրոնի տնօրեն եւ գեղղեկ Վալերի Անիսենկոն ողջունեց փառատոնի մասնակիցներին եւ առաջարկեց իր երիտասարդական թատրոնում բեմադրել հայկական որեւէ գործ՝ երիտասարդ բեմադրիչի կողմից ու նշեց. «Մինսկում հայկական մեծ համայնք կա եւ նրանք կարոտ են նման գործերի»: Փառատոնի հիմնական նպատակն է ճանաչել մեկ-մեկու, վերհանել արդի հիմնախնդիրները, որոնք ինչ-որ թելերով կապվում են նաեւ մեր երկրի հետ: 850 տպաքանակով հրատարակված առաջին ժողովածուն անվճար կտրամադրվի բուհերին, մասնագետներին եւ գրադարաններին:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Թարգմանական գրականության տարածումն ու ֆինանսավորումը

**Երեկ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում բացվեց ԱՊՀ եւ Բալթյան երկրների թարգմանիչների եւ հրատարակիչների 4-րդ համաժողովը, որը կրում էր «Թարգմանական գրականության տարածումն ու ֆինանսավորումը» խորագիրը:**

**Համաժողովն անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության հովանու ներքո, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի եւ ԱՊՀ մասնակից պետությունների «Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի» աջակցությամբ: Համաժողովի չորսօրյա աշխատանքներին մասնակցելու համար Հայաստան են ժամանել շուրջ 130 պատվիրակներ 22 երկրներից, որոնց էլ միացել են 40 լրատվամիջոցների ներկայացուցիչներ (վերջիններիս աջակցել է «Վիվասել» ընկերությունը): Այդ օրերին արտերկրի լրատվամիջոցները ոչ միայն կլուսաբանեն երեւանյան համաժողովները, այլեւ կմասնակցեն «Արարատի փեշերին» խորագրով լրատվամիջոցների աշնանային դպրոցին: Համաժողովի առաջին օրը բացվեց գրքի միջազգային ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին շուրջ 50 հրատարակչություններ ու պարբերական հրատարակություններ: «Գրքի ցուցահանդեսն իբրեւ տեղեկատվական տարածք՝ ի նպաստ թարգմանական գրականության զարգացման» խորագրի ներքո կանցկացվեն գրքերի մոտ 30 շնորհանդեսներ, կկայանան հրատարակիչների ու թարգմանիչների հանդիպում-քննարկումներ:**




**Ցուցահանդեսին ներկայացված էր նաեւ 2008 թվականից ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ անցկացվող տառատեսակների «Գրանշան» միջազգային մրցույթի հաղթողների աշխատանքները: Ցուցահանդեսը բացեց եւ նոր համագործակցության առաջընթաց մաղթեց մասնակիցներին ՀԳ միության նախագահ Լեւոն Անանյանը: Հոկտեմբերի 27-29 կանցկացվեն թեմատիկ կլոր սեղաններ, բանավեճեր ու քննարկումներ: Համաժողովի հյուրերին հնարավորություն կընձեռվի ծանոթանալու նաեւ հայկական մշակույթին, ազգային երաժշտարվեստի լավագույն նմուշներին ու կատարողական արվեստին:**

**Ս. Մ.**

# Կանանց «Միկա» թիմը 3-րդ մրցանակակիր

## Արման Փաշիկյանի պարտությունները ճակատագրական եղան

***Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում վերջնագիծը հատեց շախմատի Եվրոպայի ակումբային առաջնությունը: Ավարտական 2 տուրերում տղամարդկանց «Միկա» թիմը պարզապես ձախողվեց: Միեւնույն 2,5-3,5 հաշվով պարտվելով Սարատովի «Էկոնոմիստին» եւ գերմանական «Բադեն-Բադենին», «Միկան» զրկվեց առաջնության մեդալներից ու 49 թիմերի մրցավեճում 9 միավորով (բոլոր պարտիաներում վաստակած միավորները՝ 26,5) զբաղեցրեց ընդամենը 11-րդ տեղը: Իսկ ահա կանանց «Միկա» թիմը դարձավ 3-րդ մրցանակակիր:***

6-րդ տուրում «Միկայի» մրցակիցը մրցաշարի ամենաբարձր վարկանիշ ունեցող Մոնտե Կառլոյի թիմն էր: «Միկան» զիջեց 1-3 հաշվով: Էլինա Դանիելյանը պարտվեց Համփի Կոներուին, Լիլիթ Գալոյանը զիջեց Պիա Կրամլինգին: Հարիկա Դրոնավալի-Հոու Յիֆան, Լիլիթ Մկրտչյան-Աննա Մուզիչուկ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Ավարտական տուրում «Միկան» մեծ առավելությամբ (3,5-0,5) հաղթեց բուլղարական «Լոկոմոտիվին»: Միակ կես միավորը Ադրիանա Նիկոլովային զիջեց Դանիելյանը: Դրոնավալին հաղթեց Իվա Վիդենովային, Մկրտչյանն առավելության հասավ Դարենա Սիրկովայի նկատմամբ, Գալոյանն էլ պարտության մատնեց Մարիա Յանեւային:

Այսպիսով, «Միկայի» կանանց թիմը 7 մրցախաղերից 4-ում հաղթելով, 1-ն ավարտելով ոչ-ոքի, կրելով 2 պարտություն, վաստակեց 9 միավոր (ընդհանուր միավորները՝ 18) եւ դարձավ մրցաշարի բրոնզե մրցանակակիր: Բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակով «Միկան» գերազանցեց նույնպես 9 միավոր ունեցող Ռուսաստանի «Գիպրորեշտրանս» եւ AVS թիմերին, ինչպես նաեւ Թբիլիսիի «Սամայային»:

«Միկայի» կազմում Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանն ու Հարիկա Դրոնավալին վաստակեցին 5-ական միավոր 7 հնարավորից, ընդ որում հինդիկ շախմատիստուհին մնաց անպարտելի: Իսկ ահա թիմի առաջատար Էլինա Դանիելյանը, որը մրցաշարը սկսել էր 2 անընդմեջ հաղթանակով, իր օգտին ընդամենը 3 միավոր գրանցեց՝ կրելով նույնքան պարտություն:

Կանանց մրցաշարի հաղթող դարձավ Մոնտե Կառլոյի թիմը՝ հաստատելով իր բարձր կարգը: Ավարտական տուրում չեմպիոնը ոչ-ոքի խաղաց ռուսական AVS-ի հետ ու վաստակեց 10 միավոր: Նույնքան միավոր ուներ նաեւ 2-րդ տեղը զբաղեցրած Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմը, որը 7-րդ տուրում ոչ-ոքի էր խաղացել «Գիպրորեշտրանսի» հետ: Սակայն Մոնտե Կառլոյի թիմը Սանկտ Պետերբուրգի շախմատիստուհիներին գերազանցեց բոլոր պարտիաներում վաստակած միավորների ընդհանուր քանակով (19):



Իսկ այժմ կրկին վերադառնանք տղամարդկանց մրցաշարում «Միկայի» ելույթներին: Նախորդ համարում նշել էինք, որ 2009-ին «Միկան» միակ պարտությունը կրել էր «Էկոնոմիստից», որի պատճառով էլ գրավել էր 2-րդ տեղը: Փաստորեն, պատմությունը որոշ չափով կրկնվեց, միայն այն տարբերությամբ, որ այս անգամ «Միկան» մնաց առանց մեդալների: «Էկոնոմիստի» հետ մրցավեճում վճռորոշ եղավ Արման Փաշիկյանի պարտությունը Դմիտրի Անդրեյկինից: Մյուս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Էլյանովն ու Արոնյանը, Տոմաշեւսկին ու Հակոբյանը, Ալեքսեեւն ու Սարգսյանը, Մոիսեենկոն ու Մելքումյանը, Նի Հուան եւ Պետրոսյանը:

Ավարտական տուրում էլ «Բադեն-Բադենի» հետ մրցավեճում կրկին որոշիչ եղավ Արման Փաշիկյանի պարտությունը Արկադի Նայդիչից, քանի որ Արոնյան-Ադամս, Հակոբյան-Վալյեխո, Սարգսյան-Նիսիպեանու, Մելքումյան-Նիլսեն եւ Անդրեասյան-Գուստաֆսոն պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

«Միկան», որ մեկնարկում 4 անընդմեջ հաղթանակ էր տարել, մրցաշարի վերջնագիծը պարզապես տապալեց: Ընդհանրապես վերջին շրջանում հայ շախմատիստներն անմասն են մնում պարգեւներից խոշոր թիմային մրցաշարերում, ինչը պետք է որ լրջորեն անհանգստացնի մեր շախմատային ղեկավարությանը: Հայաստանը շախմատային աշխարհում աստիճանաբար զիջում է դիրքերը:

«Միկայում» լավագույն արդյունքը ցույց տվեց Լեւոն Արոնյանը, որը 6 պարտիաներում վաստակեց 4,5 միավոր: Զավեն Անդրեասյանը 4 միավոր վաստակեց 5 հնարավորից, Վլադիմիր Հակոբյանն ու Գաբրիել Սարգսյանը նույնպիսի արդյունքի հասան 7 պարտիաներում: 3,5-ական միավոր բերեցին թիմին Հրանտ Մելքումյանը (6 հնարավորից) եւ Արման Փաշիկյանը (7-ից): Տիգրան Պետրոսյանը 4 պարտիաներում վաստակեց 3 միավոր:

Հետաքրքրականն այն է, որ մեր թիմի կազմում միայն Արման Փաշիկյանն է պարտվել՝ վերջին 3 մրցախաղերում զիջելով մրցակիցներին: Եվ այդ 3 պարտությունները «Միկային» 5 միավոր արժեցան ու թիմը զրկվեց մրցանակային տեղից:

Տղամարդկանց մրցաշարի չեմպիոնի տիտղոսը պահպանեց «Էկոնոմիստը», որին ոսկե մեդալների նվաճման համար բավարար էր նույնիսկ ոչ-ոքին ռուսական մեկ այլ թիմի՝ «Յուգրայի» հետ: «Էկոնոմիստը» վաստակեց 13 միավոր եւ 2-ով գերազանցեց 2-րդ տեղը զբաղեցրած «Յուգրային», որը լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունք ցույց տված Չեռնիգովի թիմին, ադրբեջանական ՍՈԿԱՐ-ին եւ «Բադեն-Բադենին»: Բրոնզե մեդալները բաժին հասան Չեռնիգովի թիմին:

# «Փյունիկը» կորզեց հաղթանակը

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 25-րդ տուրում կենտրոնականը «Ուլիսի» եւ «Փյունիկի» մրցավեճն էր: Երկու թիմերի համար էլ հաղթանակի գինը չափազանց բարձր էր: «Փյունիկն» այս խաղում կադրային լուրջ խնդիրներ ուներ: Վնասվածքի պատճառով խաղադաշտ դուրս չէր եկել առաջնության լավագույն ռմբարկու Գեւորգ Ղազարյանը: Որակազրկման պատճառով հանդիպմանը չէին մասնակցում Վահագն Մինասյանը, Էդգար Մանուչարյանն ու Հովհաննես Գոհարյանը: «Ուլիսի» կազմում էլ կորուստներ կային հանձին Արտակ Գրիգորյանի եւ Վալերի Ալեքսանյանի:**




**Երկու թիմերն էլ բավական զգույշ էին գործում, ուստի գոլային պահերը սակավաթիվ էին, որոնք չիրացվեցին: Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի, սակայն «Փյունիկին» խաղավերջում ժպտաց բախտը եւ չեմպիոնը կորզեց հաղթանակը: 80-րդ րոպեին «Փյունիկը» բավական վտանգավոր դիրքում տուգանային հարվածի իրավունք ստացավ եւ Արտակ Եդիգարյանը հուժկու հարվածով գրավեց Վլադիմիր Մալկովի պաշտպանած դարպասը:**

**Եթե չեմպիոնը մեծ դժվարությամբ կորզեց հաղթանակը, ապա առաջնության առաջատար «Բանանցը» սեփական հարկի տակ պարզապես ջախջախեց «Գանձասարին»՝ 5 անպատասխան գնդակ խփելով մրցակցի դարպասը: «Բանանցից» 2 գոլ խփեց Բետոն, մեկական անգամ աչքի ընկան Սամվել Մելքոնյանը, Դենիրան Օրտեգան եւ Խոսե Կառլոս Ջունիորը: Ցավոք «Բանանցի» կազմում վնասվածքներ ստացան Արթուր Ոսկանյանն ու Դենիրան Օրտեգան եւ առայժմ պարզ չէ, թե կկարողանա՞ն նրանք մասնակցել հոկտեմբերի 31-ին «Փյունիկի» հետ կայանալիք վճռորոշ հանդիպմանը:**

**Բրոնզե մեդալների համար պայքարող «Միկան» խոշոր հաշվով 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ 5-1 հաշվով պարտության մատնելով «Շիրակին»: «Միկայում» էլ արդյունավետ խաղով աչքի ընկան լեգեոներները, որոնց հաշվին 4 գոլ գրանցվեց: 2 գոլ խփեց Բոտի Դեմելը, մեկական անգամ մրցակցի դարպասը գրավեցին Էդնեյը (11 մ) եւ Էդիլսոն Ժունիորը: Մեկ գնդակ էլ խփեց «Միկայի» պաշտպան Ալեքսանդր Թադեւոսյանը: Շիրակցիներից միակ գոլի հեղինակը Մկրտիչ Նալբանդյանն էր: «Իմպուլսը» Դիլիջանում 2-0 հաշվով հաղթեց «Կիլիկիային» շնորհիվ Էլտոն Կարդոսոյի եւ Զավեն Բադոյանի խփած գոլերի:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բանանց | 25 | 18 | 4 | 3 | 55-22 | 58 |
| 2. Փյունիկ | 25 | 17 | 5 | 3 | 68-22 | 56 |
| 3. Ուլիս | 25 | 15 | 3 | 7 | 37-20 | 48 |
| 4. Միկա | 25 | 13 | 4 | 8 | 43-26 | 43 |
| 5. Իմպուլս | 25 | 8 | 7 | 10 | 25-40 | 31 |
| 6. Գանձասար | 25 | 7 | 3 | 15 | 23-41 | 24 |
| 7. Կիլիկիա | 25 | 4 | 3 | 18 | 19-55 | 15 |
| 8. Շիրակ | 25 | 2 | 3 | 20 | 19-63 | 9 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 15 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 14 |
| Էդուարդո դոս Սանթոս | «Բանանց» | 11 |
| Էդնեյ | «Միկա» | 10 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 9 |
| Հովհաննես Գոհարյան | «Փյունիկ» | 7 |
| Արթուր Քոչարյան | «Գանձասար» | 7 |
| Դենիրան Օրտեգա | «Բանանց» | 7 |

# Ոչինչ չվճռող հաղթանակ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի ավարտական խաղում 1-0 հաշվով հաղթեց Լիտվայի ընտրանուն: Հանդիպման ելքը վճռեց 65-րդ րոպեին Խորեն Մանուչարյանի խփած միակ գոլը: Այդ հաղթանակը մեր ընտրանու համար այլեւս ոչ մի նշանակություն չուներ: Մեր պատանիներին չհաջողվեց մտնել հաջորդ փուլ:

Ընտրական 11-րդ խմբի հաղթող ճանաչվեց Իսպանիայի հավաքականը, որն ավարտական խաղում 3-0 հաշվով պարտության մատնեց Իսրայելի ֆուտբոլիստներին: Վերջիններս եւս կշարունակեն պայքարը հաջորդ փուլում:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իսպանիա | 3 | 3 | 0 | 0 | 12-0 | 9 |
| 2. Իսրայել | 3 | 2 | 0 | 1 | 4-3 | 6 |
| 3. Հայաստան | 3 | 1 | 0 | 2 | 1-6 | 3 |
| 4. Լիտվա | 3 | 0 | 0 | 3 | 0-8 | 0 |

# Երկու մրցանակակիր

**Խարկովում անցկացված բռնցքամարտի Եվրոպայի գավաթի խաղարկությունում Հայաստանը ներկայացրած 5 բռնցքամարտիկներից 2-ն արժանացան արծաթե մեդալի: Մրցակարգի համաձայն, քաշային յուրաքանչյուր կարգում Եվրոպայի գավաթն էին վիճարկում 4-ական բռնցքամարտիկներ, որոնք պայքարը սկսում էին կիսաեզրափակիչ փուլից: Այս փուլում Հովհաննես Դանիելյանը (49 կգ) 2-10 հաշվով պարտվեց ռուսաստանցի Ալեքսանդր Սամոյլովին, իսկ բրոնզե մեդալի համար մենամարտում զիջեց ուկրաինացի Դենիս Շկարուբոյին (2-9) եւ մնաց առանց պարգեւի:**

**Հաջող հանդես եկան Վոլոդյա Հայրապետյանը (64 կգ) եւ Անդրանիկ Հակոբյանը (75 կգ), որոնք դարձան արծաթե մրցանակակիրներ: Հայրապետյանը կիսաեզրափակիչում 3-2 հաշվով հաղթեց հունգարացի Գիուլա Կեյտին, իսկ ահա եզրափակիչում զիջեց ուկրաինացի Վյաչեսլավ Կիսլիցինին (1-7): Անդրանիկ Հակոբյանն առաջին մենամարտը շահեց մոլդովացի Վիկտոր Կոտույանչիից (4-3), սակայն վճռորոշ մենամարտում պարտվեց ուկրաինացի Եվգենի Խիտրովին:**

**Մեր մյուս 2 բռնցքամարտիկներն անհաջողության մատնվեցին: Դերենիկ Գիժլարյանը (52 կգ) ֆրանսիացի Նորդին Օուբալիի հետ մենամարտում 2-րդ ռաունդում նոկաուտի ենթարկվեց ու հրաժարվեց 2-րդ մենամարտից: Արթուր Խաչատրյանն էլ պարտություններ կրեց էստոնացի Այնար Կառլսոնից (0-3) եւ Պավել Բիկովից (1-6):**

# Տիգրան Ղարամյանը մեկնարկեց ոչ-ոքիներով

**Ֆրանսիական Կապ դ’Ագդ քաղաքում մեկնարկած արագ շախմատի մրցաշարի 16 մասնակիցների թվում է Ֆրանսիան ներկայացնող հայազգի գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը: Մասնակիցները բաժանվել են երկու ենթախմբի: Չորս լավագույնները կշարունակեն պայքարը եւ նոկաուտ համակարգով կորոշեն մրցաշարի հաղթողին: Տիգրան Ղարամյանն ընդգրկվել է B խմբում: Առայժմ նա իր 3 մրցախաղերի բոլոր պարտիաներն էլ ավարտել է ոչ-ոքի՝ հաշտություն կնքելով Չժու Չենի, Կատերինա Լահնոյի եւ Յոն Լյուդվիգ Համերի հետ: 3 տուրից հետո Ղարամյանը վաստակել է 1,5 միավոր:**

**B խմբում 2,5-ական միավորով առաջատարներն են Վասիլի Իվանչուկն ու վիետնամցի Լե Կուանգ Լյեմը: A խմբում 3 հաղթանակ է տոնել Հիկարու Նակամուրան, 2,5 միավոր ունի Բու Քսյանջին:**

# Լավագույնը Կառլսենի արդյունքն է

**Չինաստանի Նանցզին քաղաքում ավարտվեց շախմատի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկության առաջին շրջանը: 5 տուրից հետո աղյուսակը 4 միավորով գլխավորում է նորվեգացի Մագնուս Կառլսենը: Վերջին 3 տուրերում նա հաղթեց Վան Յուեին եւ Վեսելին Թոփալովին ու ոչ-ոքի խաղաց Վուգար Հաշիմովի հետ: 3,5 միավորով 2-րդ տեղում է ֆրանսիացի Էթիեն Բաքրոն, որն անհաջող մեկնարկից հետո 3 անընդմեջ հաղթանակ տոնեց՝ հաջորդաբար պարտության մատնելով Վուգար Հաշիմովին, Վիշվանաթան Անանդին եւ Վան Յուեին: Անանդը 2,5 միավորով եզրափակում է լավագույն եռյակը: Նա հաղթեց Թոփալովին, հաշտություն կնքեց Հաշիմովի հետ: Վերջինս ունի 2 միավոր: 1,5-ական միավորով աղյուսակը եզրափակում են Թոփալովն ու Վան Յուեն:**

# ՀՀ հավաքականը կմրցի Եմենի հետ

**Նոյեմբերի 17-ին ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը հյուրընկալվելիս ընկերական խաղում կմրցի Եմենի ընտրանու հետ: Վերջինս ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում 117-րդ տեղում է: Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մտադիր է հրավիրել մեր ընտրանու բոլոր խաղացողներին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Մարդը, գործիչը, քաղաքապետը ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Մարդկանց գնահատումը միշտ ավելի բարդ, ավելի նուրբ գործ է, քան այս կամ այն պատմական իրադարձության գնահատումը:

Ընդգծված անհատականությունների մասին ժամանակակիցների վկայությունները, անտարակույս, չափազանց արժեքավոր են, որովհետեւ դրանցում պահպանվել է ընկալման անմիջականությունը, այնպիսի մանրամասների իմացությունը, որոնք գրեթե միշտ վրիպում են այն մարդկանց տեսադաշտից, ովքեր չեն եղել իրադարձությունների մասնակիցները, կամ վկաները:

Մենք ժամանակակիցն ենք Մուրադ Մուրադյանի, նրա մոտ ընկերներն ու բարեկամները եւ այդ իսկ իրավունքով, պատասխանատվության զգացումով էլ գրում ենք նրա անցած փառավոր ճանապարհի եւ գործունեության մասին:

Գերազանցությամբ ավարտելով Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը (1953 թ.), հինգ տարի ֆիզիկա եւ մաթեմաթիկա է դասավանդել միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում: Մոսկվայի մեքենաշինական ինստիտուտում սովորեց հեռակա կարգով, որովհետեւ նոր գիտելիքների պահանջ էր զգում: Գործունեության նոր եւ ավելի լայն ասպարեզ էր պատրաստում ինքն իրեն: Եվս հինգ տարի աշխատել է Լենինականի հղկող հաստոցների գործարանում` սկսելով շարքային ինժեների պաշտոնից մինչեւ գործարանի դիրեկտորի տեղակալ արտադրության գծով: 1964 թվականին նշանակվել է «Միկրոէլեկտրաշարժիչներ» գործարանի տնօրեն եւ տարիներ շարունակ հետ մնացող ձեռնարկությունը դուրս բերել առաջավոր շարքեր:

Հաշվի առնելով Մուրադ Մուրադյանի արտադրության կազմակերպչի մասնագիտական հմտությունները, կենսագրության այս փուլում սրընթաց վերելք է տեղի ունենում: Ընդամենը 4 տարվա ընթացքում 1965-1968 թթ. նրան մեկը մյուսի հետեւից վստահում են մի շարք պատասխանատու պաշտոններ` ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի արդյունաբերության, շինարարության եւ տրանսպորտի բաժնի վարիչ, ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի երկրորդ, այնուհետեւ առաջին քարտուղար: Ծառայողական սանդուղքով այս արագ վերելքը շատերին կարող էր գլխապտույտ պատճառել, բայց ոչ նրան: Որովհետեւ բարձր պաշտոնների առաջ քաշելը նա չէր ընկալում որպես վարձ նախորդ շրջանի լավ աշխատանքի համար, այլ ընդունում էր որպես գնահատական, որը դեռ պետք է արդարացնել:

Վստահություն, որը շահել էր, բայց դեռ պետք է ամրապնդեր:

Մուրադ Մուրադյանի Լենինականում աշխատած տարիները իրավամբ անվանում էին «Ունիկալ կառույցների» տարիներ:

Մեկը մյուսի հետեւից շահագործման հանձնվեցին Լենինականի Ա. Մռավյանի (այժմ Վ. Աճեմյանի) անվան դրամատիկական թատրոնը, երկաթուղային կայարանի, զբոսաշրջիկների համալիրի, «Շիրակ» հյուրանոցի, պիոներների պալատի նորակառույցները, սկսվեցին Լենինականի օդանավակայանի շինարարական աշխատանքները, քաղաքի երկու մասերը միացնող 200 մ թռիչքով կամուրջը, գործարկվել են երկու ջրատար Ղազանչիից, մեկ տասնյակից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ:

Կանգնեցվել է Հայրենական մեծ պատերազմում զոհված լենինականցի զինվորներին եւ սպաներին հավերժացնող «Մայր Հայաստան» հուշահամալիրը, «Անհայտ զինվորի» գերեզմանով, հայ մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի եւ ուրիշների արձանները ու այլ հուշարձաններ:

1975 թվականին Մ. Մուրադյանն ընտրվեց Երեւանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ: Այդ պաշտոնում նա աշխատեց մոտ 11 տարի, նա անդուլ ու ջանադրաբար կառուցեց մեր մայրաքաղաքը` խոր հետք թողնելով Երեւանի կենսագրության մեջ:

Անվարան կարելի է ասել, որ նա եղավ մեր լավագույն քաղաքապետներից մեկը:

Այստեղ էլ ավելի ցայտուն դրսեւորվեցին նրա կազմակերպչական ունակությունները, մտածողության մասշտաբայնությունն ու արդիականությունը:

Այդ տարիներին Երեւանում շահագործման է հանձնվել մոտ 5 մլն. ք/մ. բնակելի շենք, 44 դպրոց եւ 11 կից կառույցներ, 52 մսուր մանկապարտեզ, 19 հիվանդանոց, 4 շտապ-օգնության կայան, 23 պոլիկլինիկա, 17 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 86 դեղատուն եւ սոցիալական նշանակության բազմաթիվ այլ օբյեկտներ:

Որպեսզի ըստ արժանավույն գնահատվի Մուրադ Մուրադյանի ավանդը մեր մայրաքաղաքի զարգացման գործում, բավական է թեկուզեւ ոչ ամբողջությամբ, պարզապես թվարկել քաղսովետի գործկոմում նրա պաշտոնավարման ընթացքում իրականացված առավել խոշոր գործերը:

Ահավասիկ.

- Երեւանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի (քաղաքապետարանի) նոր շենքի նախագծման եւ շինարարական աշխատանքների սկսման աշխատանքների նախաձեռնություն.
- Երեւանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի (ներկայումս Ռուսաստանի Դաշնության դեսպանատան) շենքը.
- ՀԿԿ քաղլուսան (ներկայումս ամերիկյան համալսարանի) շենքը.
- ՀՀ կառավարության թիվ 3 մասնաշենքը Գլխավոր պողոտայում.
- «Երեւաննախագիծ» ինստիտուտի նորակառույցը Գլխավոր պողոտայում.
- «Երեւանվերանորոգում» նախագծային ինստիտուտի նորակառույցը Քոչարի փողոցում.
- «Զվարթնոց» օդանավակայանը.
- «Էրեբունի» օդանավակայանը.
- Դավիթաշենի կամուրջի շինարարության սկիզբը.
- Գլխավոր պողոտայի եւ օղակաձեւ զբոսայգու իրականացումը.
- Երեւանի ջրա-ջերմամատակարարման համապարփակ խնդիրների լուծումը` ներառյալ պոմպակայանի, գլխավոր խողովակաշարի եւ օրական կարգավորման ջրավազանների կառուցումը:

Այդ տարիներին քաղաք մուտք գործող ջրի քանակը ավելացավ վարկյանում 5000 լիտրով:

Եվ վերջապես, 1975-1985թթ. Երեւանում կանգնեցվել է ականավոր հայերի շուրջ մեկ տասնյակից ավելի հուշարձան, այդ թվում` Վարդան Մամիկոնյանի, Եղիշե Չարենցի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Հայկ Բժշկյանցի` Գայի, Մարտիրոս Սարյանի, Արմեն Տիգրանյանի եւ այլ հուշարձաններ:

Ազգօգուտ է եղել Մուրադ Մուրադյանի գործունեությունը ՀԿԿ ԿԿ քարտուղարի բարձր պաշտոնում 1985-1988 թթ.: Այստեղ նա ղեկավարել է հանրապետությունում շինարարության կազմակերպման աշխատանքները: Այդ տարիներին հանրապետությունից դուրս նա ղեկավարում էր նաեւ Չեռնոբիլում (ատոմակայանի վթարից հետո) եւ Նոր Ուրենգոյում իրենց ենթակառուցվածքներով նոր բնակելի թաղամասերի կառուցման աշխատանքները:

Մերօրյա կյանքում, երբ ականատես ենք լինում, թե ինչպես է զարգանում ներկայիս Երեւանը, հասկանում ես, թե քաղաքի ճակատագրի համար ինչ վիթխարի նշանակություն ունեն ղեկավարների մարդկային-անհատական հատկանիշները:

Այսօր էլ Մուրադ Մուրադյանին հանդիպելիս զգում ես, որ նա շարունակում է ապրել Երեւանի ու Գյումրվա կյանքով, նրանց ամենօրյա գործերով, կարիքներով եւ, առհասարակ, այժմյան ու վաղվա Հայաստանի հոգսերով ու հիմնախնդիրներով:

Եվ պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության անկախության 19-րդ տարեդարձին հանրապետության նախագահի կողմից իր կատարած ազգանվեր գործունեության համար նա արժանացավ ամենաբարձր` «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

Ահա սա է մեր հարգարժան քաղաքապետի դիմանկարը, որի 80 տարին լրանում է այսօր` 26.10.1930թ.

Ցանկանք մեր ընկերոջը երկար տարիների քաջառողջություն եւ հաջողություններ:

**ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ իսկական անդամ,**
**ակադեմիկոս**
**ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ**
**ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ,**
**ԽՍՀՄ ԵՎ ՀՀ ժողովրդական ճարտարապետ**




**Բոլոր կազմակերպությունների եւ շահագրգիռ անձանց ուշադրության**

Շնորհանդես`
Հայաստանի հելիոֆիկացումը

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու Արմենական-Ռամկավար Ազատական Կուսակցության նախաձեռնությամբ տեղի ունեցող համահայկական հակաճգնաժամային ծրագրի` «Հելիոտեխնիկա, հելիոտեխնոլոգիաներ եւ Հայաստանի հելիոֆիկացում» շնորհանդեսին, որը կներկայացնեն հեղինակները` տեխ. գիտ. դոկտ. պրոֆ. Վահան Համազասպյանի գլխավորությամբ:

Շնորհանդեսը տեղի կունենա այսօր, **հոկտեմբերի 26-ին ժամը 13-ին** Թեքեյան կենտրոնի դահլիճում:

**Supply, installation and connection of hardware and IT network equipment for the State Registry of Legal Entities under the Ministry of Justice of the Republic of Armenia**
**EuropeAid/130-672/L/SUP/AM**

The Delegation of the European Union to Armenia intends to award a supply contract for delivery, installation and connection of hardware and IT network equipment for the State Registry of Legal Entities under the Ministry of Justice of the RA. The tender dossier is available from the following Internet address:
https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome
The deadline for submission of tenders is **14:00 local Armenian time on Thursday 25 November 2010.**

**Համակարգչային տեխնիկական ապահովման եւ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ցանցային սարքավորումների մատակարարում, տեղադրում եւ միացում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կոմիտեի համար:**
**Հայտամրցույթի համարը` EuropeAid/130-672/L/SUP/AM**

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կոմիտեին համակարգչային տեխնիկական ապահովման եւ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ցանցային սարքավորումների մատակարարման, տեղադրման եւ միացման համար: Հայտամրցույթի ամբողջական փաթեթը կարող եք գտնել հետեւյալ կայքէջում.
https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome
Հայտերն ընդունվում են մինչեւ 2010թ-ի նոյեմբերի 25-ի, տեղական ժամանակով ժամը 14:00-ն:

Ռիելտոր Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն Ակսոն ԱՅ Բորսայի հարթակում իրականացնելու է ստորեւ նշված անշարժ գույքի աճուրդային վաճառքը`

- Արտադրական տարածք, ընդ. մակերեսը` 3573.1 քմ, որից 404.0 ք.մ. ընդհանուր օգտագործման, հողամաս` 0.06057 հա սեփականության իրավունքով եւ 0.0110 հա ընդհանուր օգտագործման: Հասցե` ք. Երեւան, Խանջյան 19: Մեկնարկային գինը` 570995040 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը` դասական հոլանդական եղանակներով` ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 26.11.2010թ-ից մինչեւ 26.02.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 16.00-ն: Աճուրդի մասնակիցները` ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական` լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում` աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել` (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 25.10.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: